



Հեղազուրական խմբի ռեկամյար՝
ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅՑԱՆ
գնարեսագիրության թևկնածու, դոցենտ

Հեղազուրական խմբի անդամներ՝
ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամրերդ» հեղազուրական կենտրոնի
կրտսեր փորձագեր

ԶԻՆԱՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 303.8
ԳՄԴ 72.4
Ա 259

*Հրապարակության է երաշխասպորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը*

Մասնագիտական խմբագիր՝
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր
Գրախոսներ՝ **Գրիգորյան Ա. Վ.**
տ.գ.թ., դոցենտ
Բարաջանյան Ս. Ս.
տ.գ.թ.

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Աթոյան Վ., Մովսիսյան Շ.,

Ա 259 **Չինաստանի ուղեղային կենտրոնները /Վ. Աթոյան, Շ. Մովսիսյան /Եր.:
Տնտեսագետ, 2016, 80 էջ («Ամբերդ» մատենաշար):**

Աշխատությունը՝ նվիրված է Չինաստանի ուղեղային կենտրոնների զարգացման փուլերի, գործունեության առանձնահատկությունների, հանրային քաղաքականության ոլորտում դերակատարության և քաղաքական վերնախավի որոշումների և փորձագիտական հանրության վրա ազդեցության գործիքների ուսումնասիրությանը։ Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է Չինաստանի շուրջ 90 կենտրոն։

Աշխատությունը՝ նախատեսված է հանրային քաղաքականության հետազոտական հաստատությունների գործունեությամբ հետաքրքրվող մասնագետների և ընթերցողների լայն շրջանակների համար։

ՀՏԴ 303.8 ԳՄԴ 72.4

ISBN 978-9939-61-139-6

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2016 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
1. Չինաստանի ուղեղային կենտրոնների ոլորտի ընդհանուր նկարագիրը	7
2. Չինաստանի ուղեղային կենտրոնների զարգացման պատմական փուլերը.....	9
3. Չինաստանի ուղեղային կենտրոնների տիպաբանությունը	19
4. Չինաստանի ուղեղային կենտրոնների դերը հանրային քաղաքականությունում.....	22
5. Չինաստանի ուղեղային կենտրոնների վարկանշավորումը.....	28
6. Չինաստանի մի շարք առաջատար ուղեղային կենտրոնների նկարագրությունը.....	30
6.1. Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ինսպիրուվներ.....	30
6.2. Չինաստանի հասարակական գիրությունների ակադեմիա	34
6.3. Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինսպիրույթ	38
6.4. Պերական խորհրդի գարզացման հետազոտական կենտրոն.....	41
6.5. Միջազգային և ուսումնասիրությունների ինսպիրույթ	44
6.6. Միջազգային ուսումնասիրությունների Շանհայի ինսպիրուվներ	45
6.7. Ցումիրուղ գնարեսագիրության ինսպիրույթ	49
6.8. Ֆինանսական ուսումնասիրությունների Չունչյան ինսպիրույթ	52
6.9. Միջազգային գնարեսական փոխանակումների չինական կենտրոն....	56
6.10. Չինաստանի և գլոբալացման ուսումնասիրության կենտրոն.....	61
Եզրակացություն.....	63
Գրականության ցանկ.....	66
Հավելված.....	69
Ամփոփումներ.....	77

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայիս հարակովիոյ աշխարհի գործընթացները, աշխարհաքաղաքական մտահոգիչ իրավիճակը, Հայաստանի ու հայության առջև ծառացած բազմաթիվ մարտահրավերները, ի թիվս բազմաթիվ մեխանիզմների կիրառման անհրաժեշտության, առաջ են բաշում ոչ ստանդարտ լուծումների որոնման և, այդ համատեքստում հայության, ինտելեկտուալ ուսուրաների համախմբման հիմնախնդիր:

Նման պայմաններում պետության բնականոն զարգացման ապահովումը բարձրագույն իշխանության առջև խնդիր է դնում մշտապես դիտարկման ենթարկել արտաքին և ներքին քաղաքական և տնտեսական գործընթացները: Այս խնդիրի հաջող իրագործումը պահանջում է տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության, կանխատեսման և համապատասխան առաջարկությունների գործուն համակարգի ստեղծում և կիրարկում: Բազմաթիվ երկրներում համանման խնդիրների իրականացման համար հաշողությամբ օգտվում են ինտելեկտուալ արտադրանք թողարկող համապատասխան հաստատություններից, որոնք ընդունված է անվանել «ուղեղային կենտրոններ»:

Գաղտնիք չե՞ն որևէ գործում հաջողելու նախապայմաններից են ինքնաճանաչությունն ու աշխարհաճանաչությունը: Ինչպես իրավացիորեն նշում է չինացի հոչակավոր ուազմավար Սոն-Ցզին՝ հարյուր անգամ ավելի անվտանգ կիրվես, եթե գիտես և՝ քեզ, և՝ նրան: Եթե ճանաչում ես միայն քեզ և չես ճանաչում հակառակորդին, ճակատամարտերից մեկում կհաղթե՛ս, միուսում կպարտվե՛ս: Ամեն մի ճակատամարտ կավարտես պարտությամբ, եթե չե՛ս ճանաչում ինք քեզ և հակառակորդին¹: Հենց այդ համատեքստում հայկական փորձագիտական հանրության համար առավել քան իրատապ է միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունը, ասել կուզենք՝ աշխարհաճանաչության խնդիրը: Վերոնշյալ սկզբունքներով է առաջնորդվում նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որի փորձագետների ուսումնասիրության առանցքում են, մասնավորապես՝ աշխարհի տարբեր երկրների ուղեղային կենտրոնները, վերջիններիս փորձը և դրա տեղայնացման հնարավորությունները Հայաստանում: Սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել են Չինաստանի ժողովրդական Հանրապետության ուղեղային կենտրոնները: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով: Առաջին՝ աշխատանքն արդեն իր տեսակով աննա-

¹ Սոն-Ցզի, Մտրատեղիայի արվեստը: Թարգմ. Ա. Տեր-Հովհաննիսյան, խմբագիր՝ Ս. Մկրտչյան, Եր., Բյուրոկրատ, 2011, էջ 22:

խաղեաւ է հայ իրականության մեջ: Թեպետ հայրենական մասնագիտական գրականության մեջ կան մի շաբք աշխատանքներ՝ նվիրված Չինաստանի տնտեսական և քաղաքական զարգացմանը, սակայն դրանցում բավարար ուշադրություն չի դարձվում երկրի աննախադեպ թոփչի ինտելեկտուալ կողմերին, իսկ ուղեղային կենտրոններին նվիրված քիչ թե շատ ամփոփ հայերեն աշխատանքներ առհասարակ չկան: Ուստի մեր ուսումնասիրությունը կարող է, թերևս « համարվել ոլորտի ներկայացման առաջին փորձը: Եվ երկրորդ՝ խսդիրը հետաքրքրական է նրանով, որ ԶԺՀ-ն իր 60-ամյա պատմության ողջ ընթացքում այնքան մեծ ուշադրություն չի հատկացրել ուղեղային կենտրոններին, որքան վերջին տասնամյակում: Ավելին՝ ուղեղային կենտրոնների բացարձակ քանակով ԶԺՀ-ն աշխարհում երկրորդն է՝ զիջելով միայն ԱՄՆ-ին:

Հատկապես ակնհայտ է դարձել, որ վերջին տասնամյակների ընթացքում ամրող աշխարհում պետության քաղաքական որոշումների կայացման մեջ վճռորոշ ազդեցություն են ձեռք բերել հենց ուղեղային կենտրոնները: Վերջիններս հանրային քաղաքականության հետազոտական հաստատություններ են, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնց նպատակներից է հանրային բարիքի ստեղծումը՝ պետության քաղաքականության իրականացման ու որոշումների կայացման գործընթացին նպաստելու միջոցով: Կարելի է ասել, որ այս կենտրոնները յուրահատուկ «կամուրջ» են գիտելիքի և քաղաքականության միջև: Թեև վերլուծական կենտրոններն այսօր դարձել են համընդհանուր երևույթ, սակայն համարվում են առավելապես արևմտյան երկրների ծնունդ և պրակտիկա, որտեղ պետական կառավարման գործընթացում մեծ է ոչ պետական հաստատությունների դերը: Զարգացող երկրներում ուղեղային կենտրոնները ձևավորվել են հարաբերականորեն ավելի ուշ և ունեն գործունեության մի շաբք առանձնահատկություններ:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել համաշխարհային տնտեսության առանցքային խաղացող համարվող Չինաստանի ուղեղային կենտրոնների զարգացման փուլերը, գործունեության առանձնահատկությունները, հանրային քաղաքականության ոլորտում դերակատարությունը և քաղաքական վերնախավի որոշումների վրա ազդեցության ուղիները: Հավելներ, որ այս հետազոտության շրջանակներում բազմակողմանիորեն ուսումնասիրվել է Չինաստանի շուրջ 90 կենտրոնի գործունեությունը:

1

ԶԻՆԱՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վերջին տասնամյակներին ամբողջ աշխարհում ուղեղային կենտրոնների (ՈՒԿ) քանակի կտրուկ աճ է նկատվում պայմանավորված մի շարք գործուներով, առաջին հերթին՝ տեղեկատվական և տեխնոլոգիական հեղափոխությամբ, տեղեկատվության ասպարեզում պետական մենաշնորհի թուլացմամբ, քաղաքական խնդիրների աճող բարդությամբ, գորակացմամբ, ոչ պետական խաղացողների ավելացմամբ և վերջիններին դերակատարության մեծացմամբ, ճշգրիտ տեղեկատվության և որակյալ վերլուծությունների նկատմամբ աճող պահանջարկով։ Խնտենախվ է, աճը հատկապես զարգացող երկրներում, ինչը մեծավ մասամբ պայմանավորված է այս երկրների՝ համաշխարհային տնտեսություն խնտեգրմամբ, ազդեցության մեծացմամբ և ներքին ու արտաքին քաղաքականության անկախ ուսումնասիրությունների պահանջով։

Ըստհանուր առմամբ, զարգացող երկրներում հիմնական մարտահրավերը մոտև է ՈւԿ-ների անկախությունը։ Արևմուտքում ՈւԿ-ները բնութագրվում են որպես կառավարության «արտաքին ուղեղ» (external brain of government)։ Դրանց բնորոշ առանձնահատկությունը անկախությունն է կառավարությունից և կուսակցություններից։ Չինաստանում նման կենտրոններ չափազանց քիչ են։ Ներկայումս ՈւԿ-ների ծանրակշիռ մասը սերտ կապեր ունի կառավարության հետ և ընդամենը 5 տոկոսն է համարվում անկախ (գերակշռում են կիսապետական հետազոտական կենտրոնները)։ Վերջիններս փոքր կառուցներ են, առավելագույնը 20 աշխատակցով և մոտ 450 հազար ԱՄՆ դոլար տարեկան բյուջեով¹։

Խնդրի ուսումնասիրությամբ զրադարձ արևմտյան որոշ փորձագետների պնդումով՝ Չինաստանի ՈւԿ-ները չեն կարող համարվել «անկախ» հետազոտական հաստատություններ, ինչպիսիք են արևմտյան համանման կազմակերպությունները²։ Սակայն, նրանք համաձայն են, որ դրա փոխարեն Չինաստանի փորձագետների կապը քաղաքական վերնախավի հետ առավել մեծացնում է ՈւԿ-ների դերակատարությունը քաղաքական գործընթաց-

¹ Wang L., The Brookings Institution (2008), Think Tank in China: Growing Influence and Political Limitations, Washington DC, p. 36, URL.
www.brookings.edu/~/media/Files/events/2008/1023_china_think_tanks/20091023_china.pdf

² Shambaugh David, China International Relations Think Tanks: Evolving Structure and Process. The China Quarterly, №71 (September, 2002), pp. 575-596.

ներում¹: Վերջիններիս կարծիքով՝ համեմատած արևմտյան ՈւԿ-ների հետ, Չինաստանի ՈւԿ-ներն առավել ընդհանրական կերպով կարող են կոչվել «ուղեղային կենտրոններ»: Չինական կենտրոնները գործիք են քաղաքական վերնախավի համար՝ օգնելով լեզիտմացնել վերջինսի քաղաքական դիրքը և, միաժամանակ, կոչված են մշակելու առավել լավ լուծումներ, երբ ի հայտ են գալիս քարդ քաղաքական հիմնախնդիրներ²: Ինչպես նշում են Թոնմա Բոնդիգյելը (Thomas Bondiguel) և Թիերի Քելները (Thierry Kellner)³ ակնհայտ է, որ նմանություններով հանդերձ, Չինաստանի ՈւԿ-ները, հատկապես միջազգային հարաբերությունների ոլորտում մասնագիտացածները, տարրերվում են իրենց արևմտյան գործընկերներից, բայց ոչ այն չափով, որ չափանիքն ՈւԿ-ներ³:

Ինչ վերաբերում է չինացի փորձագետներին, ապա ըստ վերջինների՝ Չինաստանի ուղեղային կենտրոնները կայուն և խրնակար կազմակերպություններ են, որոնք իրականացնում են գիտական հետազոտություններ և քաղաքական հարցերով խորհրդատվություն են մատուցում դրանով ազելով քաղաքական գործընթացի վրա⁴:

Մեր համոզմամբ, թեև ՈւԿ-ները Չինաստանում առավելապես պետության ծնունդ են, սակայն սխալ կիխներ ենթադրելը, թե դասական իմաստով ՈւԿ-ներ այդ երկրում չկան: Որոշ դեպքերում չինական կենտրոնները հետագոտական ավելի մեծ անկախությամբ են օժտված, քան նրանց արևմտյան գործընկերները: Բացի դրանից, իշխանական ընտրավասպի վրա չինական ՈւԿ-ների ազդեցությունը հաճախ ավելի մեծ է, քանի որ նման հաստատությունների դեկապարներ, որպես կանոն, նշանակվում են նախկին քարձրաստիճան պաշտոնյաները, որոնք ունեն ազդեցիկ անձնական կապեր կառավարական հաստատություններում: Վերոնշյալ հարցերն առավել մանրամասն կրնարկենք աշխատության հաջորդ քաժիններում:

¹ Shiu Shai Ming-Chen, Stone Diane., “The Chinese tradition of policy research institutes”. Think tank traditions: Policy research and the politics of ideas. Edited by Stone D. and Denham A., Manchester University Press, 2004, էջ 142-143:

² Shai Ming-Chen, Stone Diane, The Chinese tradition of policy research institutes. Think tank traditions: Policy research and the politics of ideas. Edited by Stone D. and Denham A., Manchester University Press, 2004, pp. 144.

³ Thomas Bondiguel, Thierry Kellner, The impact of China's foreign policy think tanks, BICCS Asia Paper Vol. 5 (5), 2009, p. 13.

⁴ Zhu Xufeng, Xue Lan. Think Tanks in Transitional China. Public Administration and Development. 2007. № 27, p. 453.

2

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈԽԼԵՐԸ

Չինաստանում գործառնական առումով ներկայիս Ռուս-չինական պատճենները և խորհրդատվական խմբեր եղել են շատ վաղուց, ըստ որոշ հեղինակների՝ նոյնիսկ Կոնֆուցիոսի օրոք¹: Փորձագետների և խորհրդատվություն տրամադրողների այդ խմբերն իրենց անվանում էին «թագավորի խորհրդատուններ» (“counselors of the prince”): Որոշ գիտնականներ Ռուս-չինական վաղ օրինակ են համարում «հետազոտական համայնքները» (“study societies” (学会 xuehui))², որոնք ծաղկում էին 19-րդ դարի սկզբին բարձրաստիճան պետական ծառայողների հովանավորությամբ՝ նպաստելով «մտածողության մոդեռնիստական դպրոցի» ձևավորմանը և հանգեցնելով 1897 թ. Միջազգային ուսումնասիրությունների չինական ինստիտուտի (Chinese Institute of International Studies), որը միջազգային ուսումնասիրությունների գծով Չինաստանի առաջին ինստիտուտն է, ձևավորմանը³:

Հնդկանրապես տարածված մի տեսակետ կա, թե Ռուս-չինական ծագել են ԱՄՆ-ում: Սակայն, ինչպես նշում է Ռուս-չինական ոլորտի ճանաչված փորձագետ, Փենսիլվանիայի համալսարանի «Օլտեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի ղեկավար Ջեյմս Մաք-Գանը (James McGann)⁴ սա հեռու է ճշմարտությունից: Ռուս-չինական գոյություն են ունեցել ամբողջ աշխարհում, իսկ ԱՄՆ-ում առանձնահատկությունն աշխարհի մյուս երկրների համանման կազմակերպություններից դրանց համեմատական անկախությունն է⁵:

Պետք է նշել, որ Չինաստանի՝ Արևմուտքից տարբերվող (տնտեսական, քաղաքական) պայմանները⁶ և չինական քաղաքական մշակույթն ինքնին ենթադրում են, որ այսուղև Ռուս-չինական զարգացման այլ ուղի պետք է անցնին: Ինչպես նշում է Մաք-Գանը՝ Չինաստանի Ռուս-չինական պատմությունը

¹ Meidan M., Les think tanks chinois, conseillers du roi. China Analysis/Les Nouvelles de Chine, # 16, pp. 10-11.

² Tibaldo G., Think tanks in the United States and in China. History and contemporary roles of Policy Research Institutes in two “major powers”, 2013, p. 92.

³ Thomas Bondiguel, Thierry Kellner, The impact of China’s foreign policy think tanks, BICCS Asia Paper Vol. 5 (5), 2009, p. 5.

⁴ Think Tanks in China: Growing influence and political limitations. The Brookings Institution. Washington DC, 2008, p. 22. URL: http://www.brookings.edu/~/media/events/2008/10/23-think-tanks/20091023_china.pdf

⁵ Օրինակ, միակուսակցական քաղաքական համակարգի պայմաններում Չինաստանում, բնականարար, տարբեր կուսակցությունների ստեղծած կամ դրանց գաղափարներով առաջնորդվող ուղղություններ ինչեւ չեն կարող:

կարելի է բաժանել երեք շրջանի՝ Մայի շրջան, մինչ Տյանյանմենի¹ Ժամանակակից շրջան և հետ-Տյանյանմենյան շրջան, համապատասխանաբար՝ առաջին, երկրորդ և երրորդ սերնդի ՌԿ-ներ²:

Այսպես, Մաո Ցզեղոնի (Mao Zedong) իշխանության տարիներին, այսպես կոչված՝ *առաջին սերնդի ՌԿ-ների* ազդեցությունը ներքին և արտաքին քաղաքականության վրա շատ սահմանափակ էր: Քաղաքական համակարգը չափազանց անձնակենտրոն էր, քանի որ քաղաքական իշխանությունը կենտրոնացված էր Չինաստանի կոմունիստական կուսակցության (ՉԿ) փոքրաթիվ առաջնորդների ձեռքերում Մայի գլխավորությամբ: Սա հատկապես ճիշտ է Մշակութային հեղափոխության³ շրջանի համար, եթե քաղաքանության մշակման և իրականացման գործընթացներում գերակայում էին առաջնորդների գաղափարախոսական նկատումները, ինչն իր հետքն էր թողնում թույլ ինստիտուցիոնալացված քաղաքական գործընթացների վրա: Վերջինս արտահայտվել է, մասնավորապես, Միջազգային ուսումնասիրությունների Չինաստանի ինստիտուտի պարագայում, որը անգործության էր մատնվել 1967 թվականից և կրկին ակտիվացել է միայն 1979 թ.⁴:

Ժամանակակից բնորոշմամբ ՌԿ-ների ձևավորումը Չինաստանում սկսվել է 1950-ական թվականներին: Այդ ժամանակներում ՌԿ-ները ստեղծվել են պետության կողմից և կցված են եղել համապատասխան գերատեսչություններին: Դեռևս 1949 թ. ստեղծվեց Չինաստանի ժողովրդի արտաքին գործերի ինստիտուտ՝ որպես Արտաքին գործերի նախարարության առանձին բաժանմունք: 1956 թ. Արտաքին գործերի նախարարության ենթակայությամբ հիմնվել է Միջազգային հարաբերությունների ինստիտուտը, որը հետագայում դարձել է Չինաստանի միջազգային հարաբերությունների ինս-

¹ Նկատի ունի «Տյանյանմեն իրավարակի իրադարձությունները», որոնք հայտնի են նաև որպես «հունիսի 4-ի իրադարձություններ»: 1989 թ. ապրիլին Պեկինի Տյանյանմեն իրավարակում սկիզբ առան զանգվածային ցոյցեր, որոնց մասնակիցների հիմնական նասլ ուսանողներ էին: Հունիսի 4-ին իշխանության կողմից ռազմական ստորաբաժանումների օգնությամբ ցոյցը ցրելու գործողության ընթացքում եղան հարյուրավոր զոհեր:

² McGann J., Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance. RCCPB Working Paper #21, Indiana University, March 2012, p. 11. URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

³ «Չինաստանի մշակութային հեղափոխություն» - 1966–1976 թթ. սոցիալ-քաղաքական շարժում ձևանարկված Մաո Ցզեղոնի կողմից, ով Չինաստանում «կապիտալիզմի հարավոր վերականգնման» պատճառարանությամբ նախառակ էր դրեւ վերացնել քաղաքական ընդդմությունը: «Մշակութային հեղափոխությունը հանգեցրեց ինն մշակույթի, ավանդույթների մերժմանը, մոտավորականների, կառավարության քաղաքականությունը քննադատողների համատարած հալածանքների:

⁴ Cheung T.M., The Impact of Research Institutes in the Post-Mao Period of Peking's Foreign Policy-Making, Issues and Studies, 23 (7), 1987, p. 96.

տիտուս (China Institute of International Studies¹ - *CIIS*): Սա երկրի արտաքին քաղաքականության ձևավորման մեջ պատմականորեն ոչ այդքան նշանակալի դեր է ունեցել՝ պայմանավորված այս ոլորտում *CIIS*-ից հետո ստեղծված ժամանակակից միջազգային հարաբերությունների ժնական ինստիտուտի (*CICIR*) ազդեցությամբ: Հնդ որում *CICIR*-ը միակ ինստիտուտն էր, որն իր գործունեությունը մասամբ շարունակեց Մշակութային հեղափոխության տարիներին²:

Չին-սովետական հարաբերությունների սառեցման և զարգացող երկրների նկատմամբ ազդեցության ձեռք բերման համար ընթացող մրցակցության համատերատում 1961 թ. հիմնադրվեց Աֆրիկա-Ասիա հետազոտական ինստիտուտը, որը 1964 թ. բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան Ասիայի և Աֆրիկայի հետազոտական ինստիտուտ ու Հարավարևելյան Ասիայի հետազոտական ինստիտուտ, երկուսն էլ կցված ՉՎԿ Միջազգային կապերի և Չինաստանի գիտությունների ակադեմիայի (*CAS*) փիլիսոփայության և հասարակական գիտությունների բաժիններին: Մշակութային հեղափոխությունից հետո Արևմտյան Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտը վերսկսեց իր աշխատանքները՝ նոր՝ Չինաստանի սոցիալական գիտությունների ակադեմիայի (*CASS*) կազմում:

Պետք է ավելացնել նաև, որ մինչև 1970-ականների վերջերը Չինաստանի Ռուս-ներում միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունը սահմանափակվում էր միջազգային համայնավարական (կոմոնիստական) և ազգային ազատագրական շարժումների հետազոտություններով³:

Հարկ է նշել, որ Մշակութային հեղափոխության բացասական հետևանքներից էր գիտական մտքի թուլացումը՝ պայմանավորված փորձագիտական հանրության կրթական գործընթացից օտարումով, միջազգային ակադեմիական շինումներից և նորարարությունից մեկուսացմամբ: Իրավիճակն աստիճանաբար փոխվեց 1970-ական թվականների վերջերին: Մաս Ցզեյունի մահվանից և Մշակութային հեղափոխության ավարտից հետո 1978 թ. իշխանության եկավ Դենց Խյաօրինգ (*Deng Xiaoping*): Նրա որդեգրեց «քաց դռների» քաղաքականությունը, ինչը Ռուս-ների ստեղծման նոր ալիք առաջացրեց և ազդարարեց, այսպես կոչված՝ Չինաստանի երկրորդ սերնդի Ռուս-ների ժամանակաշրջանը: Նրանց հիմնական դերն էր օգնել կառավարությանը քաղաքականության հետազոտության ոլորտում: Ինչևելու, ինչպես

¹ Նշենք, որ այս հաստատությունը կապ չունի վերևում հիշատակված Միջազգային ուսումնասիրությունների ժնական ինստիտուտի (1897) հետ:

² Stéphane Bondiguel, Thierry Kellner, The impact of China's foreign policy think tanks, BICCS Asia Paper Vol. 5 (5), 2009, էջ 8:

³ Ahmad M., The Role of Chinese Think Tanks in Foreign Policy Making: Growing Influence and Political Limitations. The Dialogue. Volume III, Number 3, p. 392. URL.
http://qurtuba.edu.pk/thedialogue/The%20Dialogue/3_3/05_mahmood_ahmad.pdf

նշում է Մարգարիտ Կառավարությունը ամբողջովին չեր վստահում Ուկրաինին, ուստի և Ուկրաինը ֆինանսավորվում էին մեկ աղբյուրից՝ Կառավարությունից և հաշվետու էին վերջինիս դեկավարությանը։ Կենտրոնական կառավարությունը հիմնում և հովանավորում էր Ուկրաինին, որպեսզի ի վիճակի լինի ամբողջովին հսկելու Ուկրաինի հետազոտությունները և հրապարակումները¹։

Ինչևիցե, Չինաստանի առաջնորդները սկսեցին վերագնահատել արհեստավարժների ու մասնագետների անհրաժեշտությունը և հնարավորությունները, ահա և որդեգրած «չորս արդիականացման» (գյուղատնտեսություն, արդյունաբերություն, գիտություն և տեխնոլոգիա, ռազմական ոլորտ) դյուրացման նպատակով շեշտադրեցին Ուկրաինի հիմնումը։ Այս առումով Դեն Սյառափինը տարբերվում էր նախորդներից և խրախուսում էր ներկուսակցական քննարկումները՝ թույլ տալով փորձագետներին և մասնագետներին ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը հակասական հարցերի մասին։ Մեփական իշխանության լեզվիմության ամրապնդման նպատակով նա փորձում էր ձևավորել քաղաքականության մշակման արհեստագործ և համակարգված գործընթաց²։

Պետական խորհրդի ներքո հիմնելով բազմաթիվ հետազոտական հաստատություններ՝ Չինաստանի դեկավարները գիտակցում էին, որ տեխնոլոգատական համակարգի կառուցումը կարևոր դեր կխաղա տնտեսական և քաղաքական խնդիրների լուծման մեջ, ինչն առավել խնսիտուցիոնալացված ձևով առաջ կմտի երկրի քաղաքական համակարգը։ Մեկնարանեկով այս երևոյթը՝ որոշ փորձագետներ նշում են այն պատճառները, որոնք խթան հանդիսացան բարձրացնելու խնտելեկտուալների և, առավել լայն իմաստով, Ուկրաինի դերակատարությունը և ստեղծելու, այսպես կոչված երկրորդ սերնդի Ուկրաինը։ Առաջին՝ պետք է բավարարվեր բարեփոխումների և տեղեկատվության նկատմամբ պահանջարկը։ Պետք էր ճանաչել արտաքին աշխարհը, գլոբալ գործընթացները, միաժամանակ՝ իրավանացնելով ներքին խնդիրներին նվիրված հետազոտությունները։ Երկրորդ՝ մեծապես դեր խաղաց Դեն Սյառափին այն միտքը, որ խնտելեկտուալներն աշխատավոր դասակարգի մի մասն են, ինչը երկրում լայն ժողովրդականություն էր վայելում։ Երրորդ՝ կենտրոնական կառավարությունը կարիք ուներ որոշումների կայացման գործընթացի որոշակի ժողովրդավարացման, ինչը և առաջ մղեց

¹ McGann J., Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance. RCCPB Working Paper #21, Indiana University, March 2012, p. 11. URL: <https://www.indiana.edu/~rccpb.wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

² Nelson D.N., Charisma, Control, and Coercion: the Dilemma of Communist Leadership, Comparative Politics, 17 (1), 1984, p. 6.

ակադեմիական հետազոտական գործունեության զարգացումը¹:

Վերոնշյալ «չորս արդիականացման» իրականացման ընթացքում Չինաստանի առաջնորդները զգացին նաև գաղափարավոսության և դասակարգային պայքարի վրա շեշտադրման նվազեցման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կընձեռէր բարձրացնելու կառավարության գործունեության արհեստավարժության մակարդակը: Այդ ամենն իր արտացոլումը գտավ 1986 թ. Վերջին, ի դեմք Ժաո Զիյանգի (*Zhao Ziyang*)² կուսակցությունը կառավարությունից տարանջատելու առաջարկության: Վերջինս փորձում էր կառուցել արհեստավարժ և տեխնոլոգատիկ համակարգ, որը տնտեսական բարեփոխումներից հետո ի վիճակի կլինի լուծելու ներքին և արտաքին խնդիրները: Թեև նա ի վերջո պարտվեց ՉԿԿ պահպանողական ֆրակցիային, որը մերժեց այդ առաջարկը՝ պնդելով կառավարության վրա կուսակցական հսկողության անհրաժեշտության տեսակետը, սակայն քաղաքականության որակի բարձրացման նպատակով հետազոտական ինստիտուտներում փորձագետների հավաքագրման միտումը, որպես «չորս արդիականացման» հիմնարար բաղադրիչ, պահպանվեց: Դրա չորրին վերաբացվեցին նաև Մաոյի ժամանակաշրջանում լուծարված բազմաթիվ հետազոտական հաստատություններ և հիմնադրվեցին նորերը:

Գիտակցելով անձնակազմում պատրաստված մասնագետների պակասը³ ՉԿԿ-ն սկսեց ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական կառավարության մակարդակներում ինտելեկտուալներին ներգրավել կուսակցություն և պետական համակարգ: Մի շաբթ հետազոտական կենտրոններ, ինչպիսիք են Չարգացման հետազոտական կենտրոնը (DRC), Չինաստանի միջազգային հետազոտություններ կենտրոնը (CCIS) հիմնվեցին Ժաո Զիյանգի վարչապետության տարիներին²:

Ինչպես նշում է Մար-Գանը՝ 1989 թվականին Տյանյանմեն հրապարակում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները կենտրոնական իշխանությունների մեջ Ռուսական սովորություն առաջացրին: Այդ իրադարձություններից անմիջապես հետո որոշ Ռուսական դադարեցրին գործունեությունը: Ավանդական խորհրդային տիպի³ Ռուսական դրանում իրենց գործունեության վերսկսման համար նոր հնարավորություններ

¹ Shé'u Luo Z., The Globalization Challenge and the Role of Think Tanks in China, in J.W. Langford and K.L. Brownsey (eds), *Think Tanks and Governance in Asia-Pacific region*, Halifax, Nova Scotia, Institute for Research on Public Policy, 1991, էջ 75:

² Shai Ming-Chen, Stone Diane, The Chinese tradition of policy research institutes. Think tank traditions: Policy research and the politics of ideas. Edited by Stone D. and Denham A., Manchester University Press, 2004, p. 147.

³ Չինաստանում նման տեսակի Ռուսական առանձնահատկությունն այն է, որ դրանց աշխատակազմը երբեք չի արտահայտում կարծիք, որը կարող է հակասել քաղաքական դեկազության տեսակետին և հանդես չի գալիս նորարարական խորհրդներով:

տեսան: Այնուամենայնիվ, Չինաստանի տնտեսության փոփոխվող լանդշաֆտը փոխվեց այն համատեքստը, որում գործում էին ՈւԿ-ները: Վերջինս արտահայտվեց 2007 թվականին Ազգային Կոռպորատիվ օրենքի (National Cooperative Law) ընդունմամբ, որը որոշակի ազատություն էր ապահովում մարզային քաղաքացիական հասարակության համար: Խաղաղ և էվոլյուցիոն ճանապարհով ստեղծված նոր կոռպորատիվները ապահովում էին հարգանք մասնավոր սեփականության նկատմամբ և կրում էին մոտիվացնող և կամավոր բնույթ: Այս գործընթացը խթանեց ժողովրդավարական սկզբունքների ընդլայնումը: Այս իմաստով նոր կոռպորատիվ շարժումը օգնեց վերափոխելու Չինաստանի քաղաքացիական հասարակությունը, ինչը քաղաքացիական հասարակության հաստատությունները դարձնում է առավել ըննադատական գործընկեր պետության հետ երկխոսության մեջ: Եթե Չինաստանի շուկան դարձավ առավել ազատ, ՈւԿ-ների համար նույնական հնարավորություն ընձեռվեց գտնելու ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ: Նրանք սկսեցին օգտագործել ԶԼՄ-ները և օտարերկյա աղբյուրները: Չինացի փորձագետները, զգայով դեպի ԶԼՄ-ներ իրենց մուտքից ստացվող ֆինանսավական եկամուտները, սկսեցին առավելապես ներկայացնել սեփական կարծիքը ոչ թե իրենց հաստատությունների, այլ լրատվամիջոցների օգնությամբ: Ի վերջո, նոր միջոցները և կառավարությունից անկախությունը ՈՒԿ-ներին թույլ տվեցին դառնալու ֆինանսավես առավել ինքնավար և մտքի ազատության իմաստով առավել անկաշկանդ: Ներկայումս Չինաստանի ՈւԿ-ները լրացնում են այն քացը, որ ստեղծվել էր Մշակութային հեղափոխության հետևանքով և անցյալի մեկուսացման քաղաքականության պատճառով¹: Այս շրջանը ընդունված է անվանել երրորդ սերնդի ՈւԿ-ների շրջան:

Չինական ՈւԿ-ների ոլորտի զարգացման լուրջ խթան էր նաև ՉԺՀ Պետականությամբ և երկրի նախկին վարչապես Վեն Ջյաբայի (Wen Jiabao) ցուցումով 2009 թվականի մարտին ստեղծված Միջազգային տնտեսական փոխանակումների շինական կենտրոնի հիմնումը: Այս կենտրոնի առանձնահատկությունն այն է, որ առաջին անգամ ՈւԿ-ների ոլորտում սկսեց կիրառվել «պտտվող դռների համակարգը», որն առավելապես բնուրոշ է արևմտյան, հատկապես ԱՄՆ ՈւԿ-ների գործունեության մշակույթին: Վերջինիս էռույթունն այն է, որ ՈւԿ-ների դեկավար պաշտոններին նշանակվում են քաղաքականության և գործարար ոլորտի բարձրաստիճան անձինք, իսկ ՈւԿ-ների ներկայացուցիչներին աշխատանքի են ընդունում պետական կառավարման և տնտեսական ոլորտում: Այսինքն՝ կիրառվում է այսպես կոչված՝ ոռտացիոն սկզբունքը:

¹ McGann J., Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance. RCCPB Working Paper #21, Indiana University, March 2012, p. 11-12. URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

1956-1966

Ուղեղային կենտրոնները ստեղծվում են արդարացնելու կառավարության քաղաքականությունը, ոչ թէ իրականացնելու անկախ հետազոտություն: Գերակշռող խորհրդային ոճի զաղավարախոսությամբ և բյուրոկրատական կառուցվածքով հիերարքիկ կառուցները տեղակայված են նախարարություններում:

1976-1989

Ուղեղային կենտրոնները շեշտը դնում են տնտեսական հարցերի ուսումնասիրության վրա պատրաստելով Շինաստանին արագ զարգացման ու համաշխարհային տնտեսությանն ինտեգրմանը: Ավելի մեծ ինքնավարություն և աճող ազդեցություն ունեն, թեև դեռ գործում են Կոմունիստական կուսակցության և կառավարության կառուցվածքում:

1989 - մինչ այժմ

Շինաստանի հասարակությունը ականատես է լինում ուղեղային կենտրոնների, մասնավորապես քաղաքաշիական և համալսարաններին կից գործող հետազոտական կենտրոնների աստիճանական վերածննդին: Տեղակայված լինելով կառավարությունից դուրս դրանք դեռևս վերահսկվում են կառավարության և Կոմունիստական կուսակցության կողմից:

Գծապարկեր 1

Չինաստանի ՌէԿ-ների զարգացման երեք պատմական փուլերն ըստ Մար-Գանի

Նոր կենտրոնի խորհրդի նախագահ ընտրվեց ԶԺՀ պետխորհրդի նախկին փոխվարչապետ Զեն Պեյանը (Zeng Peiyan), իսկ տեղակա' ՉՎԿ Կենտրոնական կոմիտեին առընթեք քաղաքականության ուսումնասիրության կենտրոնի նախկին փոխստորեն Չժեն Մինլին (Zheng Xinli): Վերջինիս խոսքով՝ ի տարբերություն Սոցիալական գիտությունների ակադեմիայի և Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության ինստիտուտի, որոնք հիմնականում զբաղվում են տնտեսագիտական տեսությունների և ներքին տնտեսության հետազոտությամբ, Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի գործունեությունն ուղղված է միջազգային տնտեսության հիմնախնդիրների ուսումնասիրությանը՝ հաշվի առնելով ներքին տնտեսության շարժընթացը: Պետական քաղմարիկ պաշտոնյաներ

կարող են ստանալ հետազոտությունների արդյունքները և հասցնել դրանք երկրի բարձրագույն դեկավարությանը: Բացի դրանից, որպես ֆինանսավորման աղբյուր կծառայեն պետական, մասնավոր, միջազգային ձեռնարկությունների և այլ հիմնադրամների վճարումները, ինչը կապահովի միջոցների աղբյուրների բազմազանեցումը, հետազոտությունների արդյունքների անկախությունը և կպաշտպանի հովանավորների ազդեցությունից: Պետական միջոցներից կենտրոնի ստեղծման համար տրամադրվել է ընդամենը 5 մին յուան¹: Դրանից հետո պետական ֆինանսավորում չի նախատեսվում: Մնացած միջոցների հավաքագրման համար ստեղծվել է Կառավարման խորհրդի հիմնադրամ, որն ընդգրկել է ավելի քան 20 ձեռնարկություն: Հետազոյում պետք է ներգրավել նաև մասնավոր այլ կազմակերպություններ և անդրազգային կորպորացիաներ՝ ապահովելու ֆինանսավորման բազմազանեցումը: Դա հնարավորություն կընձեռի խուսափելու հովանավորների ազդեցության ծիրն ընկնելուց և պահպանելու հետազոտությունների անկախությունը:

Նրա դիտարկմամբ՝ Ռուս-համարվում է փափուկ ուժի առանցքային գործոն և գլոբալ միտումների տեսակետից Ռուսների նշանակությունը աստիճանաբար առավել կարևոր է դառնում: Այս կամ այն երկրի քաղաքական, տնտեսական, դիվանագիտական և այլ որոշումներ ներթափանցումն առավել խորանում է: Վերջին 30 տարում Չինաստանի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ նշանակալի նվաճումներ են եղել, սակայն, Ռուսների զարգացմանը բավարար ուշադրություն չի դարձվել: Միջազգային ֆինանսական ճգնաժամը հիշեցնում է նման կենտրոնի ստեղծման մասին: Այս կենտրոնի նպատակն է դառնալ ոչ կառավարական ինտելեկտուալ կենտրոն, որում հեռանկարային, ռազմավարական, բազմակողմանի հետազոտությունների իրականացման, հանրային քաղաքականությանը ինտելեկտուալ աջակցման և ձեռնարկությունների անդրազգային տնտեսական գործունեության ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման համար հավաքվում են բարձրակարգ և հեղինակավոր ինտելեկտուալ ռեսուրսներ²:

Հարկ է նշել, որ Չինաստանի Ռուս-ների ֆինանսավորման գործընթացում վերջին տարիներին նկատելի է նաև մեկ այլ առանձնահատկություն. ոչ առևտրային քաղաքական հետազոտությունների ֆինանսավորման նպատակով շատ Ռուսներ նույն անվամբ գրանցում են ընկերություններ: Մեկը՝ ոչ առևտրային կազմակերպություն, համապատասխան նախարարության ենթակայությամբ, մյուսը՝ առևտրային բնույթի, որպես կանոն, բաժնետիրա-

¹ Китай создает «супермозговой центр» для развития экономической дипломатии, (13.07.2009), URL: http://russian.china.org.cn/business/txt/2009-07/13/content_18127250.htm

² Չжэн Синьли, О Китайском центре международного экономического обмена: Верховном мозговом центре Китая, (22.06.2009). URL: <http://russian.people.com.cn/31521/6683598.html>

կան ընկերություն, որը համարվում է Ռուսաստ ձեռնարկություն: Չինացի գիտնականները նման կազմակերպություններն անվանում են «մեկ կազմակերպություն, երկու էություն»: Բաժնետիրական ընկերության մեջ կարող ներգրավվել տարբեր կազմակերպություններ՝ ՉԼՄ-ներ, խորհրդատվական, ներդրումային ընկերություններ և այլն¹:

Անդրադառնալով «պտտվող բնունքի համակարգին»՝ նշենք, որ դրա կիրառման վերջին օրինակներից են 2014 թվականի դեկտեմբերին դոկտոր Քու Սինգի (Qu Xings) նշանակումը Բելգիայի Թագավորությունում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան, 2015 թ. հունվարին Գիտության և տեխնոլոգիայի համալսարանի (University of Science and Technology) նախագահ Հու Ջիայգուի (Hou Jiangou) նշանակումը Գիտության և տեխնոլոգիաների նախարարի տեղակալ, Օդագնացության և տիեզերագնացության Բեյչանգի համալսարանի (Beihang University) նախագահ Հուայ Ջինփենգի (Huai Jinpeng) նշանակումը Արդյունաբերության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ, Գիտության՝ Ցինխուա համալսարանի (Tsinghua University) նախկին նախագահ պրոֆեսոր Չեն Ջինինգի (Chen Jining) նշանակումը Բնապահպանության նախարար և այլն:

Վերջին տարիների ՉԿ-ն ընդունել է բազմաթիվ կանոնակարգեր՝ կոչված արագացնելու փորձագետների մուտքը քաղաքական պաշտոններ: Այսպես, Ազգային կուսակցության և կառավարության առաջնորդության ամրապնդման գործողությունների ծրագիր 2014–2018 (Action Plan Outline on Building National Party and Government Leadership 2014–2018) պաշտոնական փաստաթուղթը ընդգծում է պետական ձեռնարկություններից, համալսարաններից, հետազոտական ինստիտուտներից և համանման այլ հաստատություններից աշխատանքի ընդունման անհրաժեշտությունը: 2015 թ. Գիտության հասուլ շրջաբերականով ՉԺՀ նախագահ Սի Շինփինը (Xi Jinping) կոչել է արել զարգացնելու գորաք ազդեցության «նոր տեսակի» չինական կենտրոնները և խթանելու ինտելեկտուալ հանրության ներուժը քաղաքականության խորհրդատվության բնագավառում²: Մինչ այդ, 2014 թվականի հոկտեմբերին Հնդկանոր քարենիխումների առաջատար խմբի 6-րդ հանդիպմանը Չինաստանի նախագահը նշել է, որ երկրի Ռուս-ները պետք է օժտված լինեն «չինական սուսանահատկություններով», առաջ մղեն Չինաստանի արդիականացումը և կառավարման համակարգը և ամրապնդեն Չինաստանի փափուկ ուժը³:

¹ Комиссина И. Н., Научные и аналитические центры Китая. Рос. ин-т стратег. исслед. М., РИСИ, 2012, с. 40–41.

² From Academia to Politics: When scholars rule China, Publication: China Brief Volume: 15, Issue: 23, (07.12.2015), URL: http://www.jamestown.org/uploads/media/_CB_15_23_3.pdf

³ Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends. China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), p. 14. URL: http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf

Այդ համատերասում պետք է նշել, որ 2014 թ. փետրվարին ՉԺՀ Կրթության նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Չինական առանձնահատկություններով օժտված նոր ուղեղային կենտրոնների ստեղծման առաջնահաման ծրագիր» (The New think Tanks Construction With Chinese Characteristics Promotion Plan) անվանումով փաստաթուղթը, որն ուղարկվել էր բոլոր ենթակա հաստատություններին: Հստ այս փաստաթղթի՝ ապագայում ՈւԿ-ների հիմնական խնդիրն է լինելու աջակցել կառավարությանը: Մասնավորապես:

- հետազոտական հաստատությունները հիմնադրվելու են երկրի զարգացմանը ծառայելու նպատակով,
- պետք է կենտրոնան առաջնահերթ պահանջների վրա (տնտեսական, քաղաքական և մշակույթի զարգացում, քնապահպանություն, կուսակցաշխնություն, արտաքին հարաբերություններ և այլն),
- ներգրավեն բարձրակարգ ուսուրանություններ,
- կրթեն և վերապատրաստեն տաղանդավոր մարդկանց,
- տարրեր ուղիներով տարածեն հետազոտության արդյունքները (տպագիր և էլեկտրոնային մամուլ),
- բարեփոխեն իրենց փարչակազմը և թարմացնեն կազմակերպական կառուցվածքը:

Գործընթացի հետագա փուլն էր Չինաստանը և գլոբալացումը կենտրոնի (CCG) կողմից 2014 թ. ապրիլին հրավիրված «Ուղեղային կենտրոնները և Չինաստանի զարգացումը. վերափոխելով Չինաստանի ուղեղային կենտրոնները» գիտաժողովը, որին մասնակցեցին ՉԺՀ և աշխարհի ՈւԿ-ների ճանաչված փորձագետներ: Գիտաժողովի նպատակն էր փոխանակել ՈւԿ-ների կառավարման ոլորտում փորձը և ամրապնդել համագործակցությունը ներգրավված բազմաթիվ մասնակիցների միջև: Սա խոսում է այն մասին, որ ՉԺՀ կառավարությունը մտադիր է ստեղծելու այնպիսի հետազոտական հաստատություններ, որոնք կարող են մրցակցել արևմտյան գործընկերների հետ¹:

Որպես ամփոփում նշենք, որ դատելով գործընթացներից՝ Չինաստանում ՈւԿ-ների ոլորտի ակտիվացումը շարունակական բնույթ է կրելու, ինչն ակնհայտորեն խթանվում է երկրի բարձրագույն իշխանության մակարդակով: Նման մոտեցումն իր դրական արդյունքներին երկար սպասել չի տա, և առաջիկա տարիներին պետք է ակնկալել չինական ՈւԿ-ների գլոբալ դերակատարման մեծացման նշանակալի միտումներ:

¹ Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends. China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), pp. 15-16. URL:
http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf

3

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ Զինաստանի Ուկների տիպարանությունը ներկայացնելը նախ նշենք, որ Ուկների առավել հայտնի տիպարանությունը տվել է 1989 թ. Քենթ Ուիվեր (Kent Weaver)¹ ժամանակին բնույթագրելով ամերիկյան հետազոտական հաստատությունները: Հստ նրա՝ Ուկները դասակարգվում են հետևյալ երեք տեսակների՝

- համալսարաններ առանց ուսանողների,
- պայմանագրային հետազոտողներ,
- շահապաշտապան կենտրոններ:

Հետագայում Մաք-Դանի հետ հրապարակած աշխատանքում Ուիվերն ավելացրել է ևս մեկ տեսակ՝ «կուսակցական կենտրոնները», որոնք որոշակի նմանություն ունեն վերոնշյալ շահապաշտապան կենտրոններին, սակայն ի տարբերություն շահապաշտապանների, որոնք փորձում են ի ցույց դնել իրենց անկախությունը, կուսակցականները պաշտոնապես գործում են քաղաքական կուսակցություններին առընթեր²:

Ինչ վերաբերում է Զինաստանի Ուկներին, ապա, ըստ ԱՄՆ փորձագետների, դրանք երեք տեսակի են՝ պաշտոնական (պետական), կիսապետական և անկախ³: Այլ փորձագետներ տալիս են հետևյալ բաժանումը՝ պաշտոնական/կառավարական Ուկներ, կիսակառավարական/ակադեմիական Ուկներ և քաղաքացիական/համալսարանական Ուկներ⁴:

Զինաստանի փորձագետները իրենց Ուկները դասակարգում են հետևյալ կերպ՝

- պետական կամ կառավարական,
- կիսապետական կամ կիսակառավարական,
- քաղաքացիական:

Պետականի կամ կառավարականի շարքում դիտարկվում են այն հաստատությունները, որոնք տեղեկատվական աջակցություն են ցուցաբերում

¹ Sté'u Kent W., The Changing World of Think Tanks, Political Science and Politics, Vol. 22, Issue 3, էջ 563-578:

² Sté'u McGann J., Kent W., Think-tanks and Civil Societies: Catalysts for Ideas and Action, Transaction Publishers, New Brunswick, 2000:

³ Комиссина И. Н., Научные и аналитические центры Китая: Справ./И. Н. Комиссина; Рос. ин-т стратег. исслед. М., РИСИ, 2012, с. 12.

⁴ Ahmad M., The Role of Chinese Think Tanks in Foreign Policy Making: Growing Influence and Political Limitations, 2008, p. 397. URL: http://qurtuba.edu.pk/thedialogue/The%20Dialogue/3_3/05_mahmood_ahmad.pdf

Չինաստանի կառավարությանը: Կիսապետական կամ կիսակառավարական ՈւԿ-ներ են համարվում այն հանրային, մեծավ մասամբ ակադեմիական հաստատությունները, որոնք հիմնում և համակարգում է կառավարությունը: Ինչ վերաբերում է քաղաքացիական ՈւԿ-ներին, ապա վերջիններս սկսել են ի հայտ գալ առավելապես 1990-ական թվականներից: Գործունեության բնույթով դրանք առանձնապես չեն տարրերում կիսակառավարականներից և իրականացնում են հետևյալ գործառույթները՝

- դեկավարությանը տրամադրում են տեղեկատվություն, վերլուծություն և խորհրդատվություն,
- իրականացնում են քաղաքականության ոլորտի հետազոտություններ,
- տրամադրում են կրթական ծառայություններ, մասնավորապես՝ քաղմաքաղաքական գիտնականներ դասավանդում են համալսարաններում, պետական հաստատություններում կարդում դասախոսություններ, մամուլում իրապարակում հոդվածներ, մասնակցում հեռուստահաղորդումների,
- Չինաստանի ճանաչված թերթերում հոդվածների իրապարակմամբ նախաձեռնում են հանրային քննարկումներ ներքաղաքական սուր խնդիրների վերաբերյալ,
- արտաքին աշխարհի համար ծառայում են որպես, այսպես կոչված՝ «Չինաստանի պատուհան»¹:

Հարկ է ավելացնել, որ քաղաքացիական ՈւԿ-ները հարաբերականորեն առավել փոքր ազդեցություն ունեն Չինաստանի արտաքին քաղաքական ուղղմավարության մշակման և քաղաքական օրակարգի ձևավորման վրա: Համալսարաններին կից հաստատություններում իրականացվող հետազոտությունները հիմնականում կրում են ակադեմիական բնույթ և «լսված» լինելու քավական սուր հնարավորություններ ունեն: Այդուհանդերձ, նրանց ուժեղ կողմերից են քաղաքականապես կարևոր ոլորտներում տեսականորեն հնարավոր լուծումների մշակումը, ուսումնասիրությունը և քննադատությունը, ինչպես նաև՝ արտերկրում տիրող իրավիճակի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը նպաստելը²:

Հատկանշական է նաև չինացի պրոֆեսոր Զյուֆենգ Չժու (Xufeng Zhu) մոտեցումը, ով չինական ՈւԿ-ները տարանշատում է միայն կիսապետականի և ոչ կառավարականի: Ըստ նրա, պետական, այն է՝ նախարարությունների կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող հետազոտական

¹ Комиссина И. Н., Научные и аналитические центры Китая. Рос. ин-т стратег. исслед. М., РИСИ, 2012, с. 15-18.

² Jackson S., “Lessons From a Neighbour: China’s Japan-Watching Community” in China and Japan: History, Trends, and Prospects, Oxford University Press, USA, 1996, pp. 155-176.

կենտրոնները ՈւԿ-ները չեն: Կիսապետական կենտրոնները, ի տարրելություն պետականների, կառավարական մարմնի ստորաբաժանում չեն, այլ վարչականորեն ենթակա են պետական որևէ կառույցի: Ոչ կառավարական են այն կենտրոնները, որոնք գրանցված են որպես շահույթ չինտապնդող կազմակերպություն, ձևնարկություն կամ համասարանի ստորաբաժանում¹:

Պետք է նշել, որ Չինաստանի ՈւԿ-ները կարող են դասակարգվել նաև հետևյալ կերպ՝ պաշտոնական (պետական), կիսապաշտոնական (կիսապետական) և մասնավոր: Ակնհայտ է, որ պետական և կիսապետական ուղեղային կենտրոնների միջև սահմանը իրականում շատ աղոտ է: Առաջին, բոլոր հաստատությունները, որոնք փոխկապակցված են Չինաստանի կառավարությանը կամ ՉԿԿ համակարգին, դասակարգվում են որպես պետական հետազոտական հաստատություններ: Այս հաստությունների առանձնահատկություններից է այն, որ ուղղաձիգ հարաբերությունների մեջ են իրենց հովանավորող և համակարգող գերատեսչությունների հետ: Ինչ վերաբերում է Չինաստանի համալսարանական ՈւԿ-ներին, ապա դրանք կարելի է դասակարգել որպես կիսապետական, քանի որ մեծ հաշվով նրանք շատ մոտ են կանգնած և, որպես կանոն, աջակցություն են ստանում պետությունից: Վերջապես, սկսած 1980-ականների վերջից ոչ մեծ քանակով սկսեցին ի հայտ գալ նաև մասնավոր ՈւԿ-ներ: Դրանց շարքը կարելի է դասել, օրինակ, Ասիայի ինստիտուտը և Չինաստանի զարգացման ինստիտուտը: Ժնեպետ վերջիններս նույնպես դժվար է լիարժեք համարել մասնավոր քնույթի հետազոտական հաստատություն, քանի որ նրանք նույնպես կախված են պետական համակարգից, իսկ դրանց տնօրենները և աշխատակազմի որոշակի մասը հիմնականում նույնպես գալիս են պետական կառավարման համակարգից:

Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Չինաստանի կիսապետական հետազոտական կենտրոնները: Դրանք կառավարության հիմնադրած և որոշակիորեն անկախ կառույցներ են, դեկավարվում են կառավարության նշանակած անձնակազմի կողմից և սկզբնական կապիտալը ևս ստանում են իրենց գործունեությունը համակարգող կառավարական գործակալություններից: Բացի դրանից, այս կենտրոնները վերահսկող մարմնից ստանում են կայուն ֆինանսավորում սահմանված հետազոտությունների իրականացման համար: Կիսապետական ուղեղային կենտրոնները կարող են հետազոտության պատվեր և ֆինանսավորում ստանալ պետական, միջազգային և այլ կառույցներից ու կազմակերպություններից: Ավելին՝ անհրա-

¹ Zhu X., The Rise of Think Tanks in China. China Policy Series, 28. London; New York: Routledge, 2013, p. 6.

Ժեղտության դեպքում կարող են ընսադատել կառավարության քաղաքականությունը: Հետաքրքրական է, որ, օրինակ, ամերիկյան խոշորագույն ՌԱԿ-ն՝ ՌԵՆԴ-ը (RAND Corporation), ֆինանսավորման 72%-ը¹ ստանում է ԱՄՆ կառավարական գործակալություններից և, միաժամանակ, անկախ հետազոտական կենտրոն է համարվում: Կարծում ենք, պատճառն այն է, որ վերջինս ֆինանսավորման աղբյուրները բազմազանեցված են, և այդ միջոցները ստացվում են տարբեր կառավարական գործակալություններից, ինչի հետևանքով դրանցից ոչ մեկը հաստատության նկատմամբ վերահսկողություն չունի:

Չինաստանի ոչ կառավարական կազմակերպությունները, ինչպես և պետականի դեպքում, նույնպես ունեն վերահսկող մարմին, սակայն երկուսի միջև կապը հարաբերականորեն առավել թույլ է: Այս կենտրոններն ունեն ֆինանսավորման տարբեր աղբյուրներ, ինչն էլ մեծացնում է վերջիններին գործունեության անկախությունը:

4

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներկայումս, ի տարբերություն ամերիկյան ՌԱԿ-ների, չինական կենտրոնները ընդհանուր առմամբ դեռևս նվազ ազդեցիկ են², թեև նկատվում է դրանց թվի կայուն աճ հետազոտությունների ոլորտի ընդլայնման հետ մեկտեղ: Բացի դրանից, ինչպես նշում է Պեկինի համալսարանի պրոֆեսոր Ուանգ Ջիսի (Wang Jisi):³ Չինաստանի ՌԱԿ-ները ունակ են մրցակցելու արևմտյան համանման հաստատությունների հետ: Ինչևետև, ըստ նրա, անհրաժեշտ կլինի աշխատել երկու հիմնական ճակատում լրացնել գիտելիքի բացը Չինաստանի պայմանների և ազգային քաղաքականության միջև կապի վերաբերյալ համաշխարհային, գլոբալ հարցերի և հարաբերությունների բնագավառում, ինչը դեռ առկա է Չինաստանում:

Որպես ազդեցության գործիքներ Չինաստանի ՌԱԿ-ները առավել հաճախ կիրառում են հետևյալ մեթոդները՝

¹ URL: http://www.rand.org/about/clients_grantors.html

² Այսպես, ամերիկյան կենտրոնների ազդեցությունը շատ հաճախ տարածվում է երկրի սահմաններից դուրս (Օր.՝ ՌԵՆԴ-ի կորպորացիայի պատվիրատուններից Էնաև Ավստրալիայի կառավարությունը), մինչդեռ Չինաստանի ՌԱԿ-ները հիմնականում ազդեցություն ունեն միայն երկրի ներսում:

³ Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends. China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), pp. 14-15.

URL: http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf

- պաշտոնական և անձնական կապեր, այդ թվում ՌԱԿ-ների նախաձեռնությամբ ճաշկերույթների, շնորհանդենների կազմակերպում,
- առանցքային պաշտոնատար անձանց համար համապատասխան համառոտ վերլուծական տեղեկանքների տարածում (միաժամանակ, տվյալ հետազոտության վերաբերյալ առավել ամբողջական հաշվետվությամբ), որում նաև արտացոլվում են որոշակի առաջարկներ,
- ԶԼՄ-ների հետ աշխատանք (հրապարակումներ մամուլում, ելույթներ հեռուսատեսությամբ, հարցազրոյցներ),
- ակադեմիական բնույթի գրքերի և հոդվածների հրապարակումներ,
- գիտածողովների կազմակերպում, որոնց հրավիրվում են ինչպես ակադեմիական միջավայրի, այնպես էլ պետական քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու անձինք¹:

Վերջին տարիներին փորձ է արվում տեղայնացնել ՌԱԿ-ների արևմտյան մոդելը՝ գլոբալ ազդեցության և հեղինակության չինական կենտրոնների ձևավորման նպատակով: Սա կարող է հանգեցնել այնպիսի կենտրոնների ձևավորմանը, որոնք չեն համապատասխանում մինչ այս Չինաստանում ձևավորված քաղաքական մշակույթին: Բացի դրանից, Չինաստանի առաջնորդները սովորաբար ձևավորում են ոչ պաշտոնական հետազոտական խմբեր կամ մասնավոր խորհրդատվական խմբեր: Նման խմբերի խորհրդատվական բնույթի առաջարկություններն ու երաշխավորությունները (recommendations), սովորաբար, առավել ազդեցիկ են, քան այնպիսի պաշտոնական կառույցներինը, ինչպիսիք են կառավարական ՌԱԿ-ները²:

Որպես կանոն, Չինաստանի քարձը մակարդակի բոլոր ՌԱԿ-ների գործունեությունը կրում է վարչական բնույթը. ելույթներ, գեկույցներ, փաստաթղթեր, վերլուծական բնույթի հոդվածներ են պատրաստում Չինաստանի դեկավարության համար:

Ինչպես նշում են հետազոտողներ Մինգ-Չեն Շայ (Ming-Chen Shai) և Դայանա Սթոն (Diana Stone)' Չինաստանի քաղաքական գործընթացներում ՌԱԿ-ները խաղում են չորս հիմնական դեր՝

1. տեղեկատվության գտիչների,
2. քաղաքականության պաշտպանների,
3. նոր գաղափարներ առաջարկողների,
4. տեղեկատվության փոխանակման միջնորդի³:

¹ Комиссина И. Н., Научные и аналитические центры Китая: Справ./И. Н. Комиссина; Рос. ин-т стратег. исслед. М., РИСИ, 2012, с. 21-22.

² Muta S., Noda M., "Status of Research Institutions in China: A Trend report". in T. Yamamoto (ed.), Emerging Civil Society in the Asia-Pacific Community, Tokyo and Singapore, Japan Center for International Exchange and the Institute of Southeast Asian Studies, 1995, p. 351.

³ Shai Ming-Chen, Stone Diane., The Chinese tradition of policy research institutes. Think tank traditions: Policy research and the politics of ideas. Edited by Stone D. and Denham A., Manchester University Press, 2004, p. 149.

Այսպես, քաղաքական առաջնորդներին տեղական և միջազգային հարցերին առնչվող անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու նպատակով ՌԱԿ-ների գործառույթն է պատրաստել համառոտ տեղեկանքներ՝ զտելով կրկնվող կամ անհամապատասխան տեղեկատվությունը:

Մյուս կողմից, քանիոր Չինաստանի քազմաթիվ չորձագետներ հանդես են գալիս որպես խողովակներ, որոնց միջոցով առաջնորդները քացահայտում են հասարակության պահանջները և գանգատները, ուստի փորձագետներն ունեն ինչ-ինչ լծակներ՝ որոշակիացնելու իշխանության օրակարգը և խնդիրների ձևակերպմամբ ազդելու ընտրախափի վրա: Այլ խոսքով, ՌԱԿ-ների տեղեկատվության զտիչի գործառույթը չափազանց կարևոր է խնդիրները սահմանելու համար, սակայն դա չի նշանակում, որ փորձագետները կարող են մարտահրավեր նետել Չինաստանի առաջնորդների քաղաքական կարգավիճակին և իշխանությանը: Ավելին, նրանք գործում են փոխադարձ ազդեցության սկզբունքով. ընտրախափի կամ հետազոտական կենտրոնների տնօրենների կողմից օրակարգի սահմանումից հետո՝ ՌԱԿ-ները սկսում են իրականացնել գործընթացի հաջորդ փուլը՝ հետազոտությունների հիման վրա համապատասխան առաջարկությունների մշակումը, որի ճանապարհով ՌԱԿ-ները օգնում են որոշում կայացնողներին պարզաբանել հասարակության հետաքրքրությունները, որոնք ներառված են խնդիրների համապիրում:

Անցնելով հաջորդ գործառույթի ըննարկմանը՝ նախ ընդգծենք, որ արևմտյան ՌԱԿ-ների հիմնական մասն առավել անկախ է կառավարությունից, նույնիսկ այն դեպքում, եթե ունեն ամուր կապեր առանցքային քաղաքական դերակատարների հետ: Ինչպես արդեն նշել ենք, Չինաստանում այս ոլորտում իրավիճակը փոքր-ինչ այլ է: Չինաստանում ՌԱԿ-ների վերլուծությունները հիմնականում ծառայում են պետական քաղաքականության և պաշտոնական գաղափարախոսության արդարացմանը, և քաղաքական առաջնորդների պաշտոնական տեսակետի լեզիտիմացմանը: Այսպես, ըստ Չինաստանի Սոցիալական գիտությունների ակադեմիայի անդամ Լյու Ժիֆենգի (*Liu Zhifeng*)¹ Չինաստանը պետք է զարգացնի իր ուրույն ժողովրդավարությունը՝ ըստ սեփական առանձնահատկությունների, իսկ համաժողովրդական ընտրությունների և մրցակցային կուսակցական համակարգի արևմտյան գաղափարները Չինաստանին չեն համապատասխանում: Համանման մեջ այլ տեսակետով՝ փորձագետը, որին թույլատրվել է հանրայնորեն ընսարկելու արտաքին քաղաքականության խնդիրները, պետք է բացատրի և արդարացնի պաշտոնական տեսակետը²:

¹ Sté'u Zhifeng L., Ping “di san zhi yan jing kan zhong guo”: jie shi zhong guo, (Comment on “The Third Eye on China”: Explaining China), Hong Kong, Ming Pao, 1996:

² Zhao Q., Interpreting Chinese Foreign Policy: The Micro-Macro Linkage Approach, Hong Kong, Oxford University Press, 1996, p. 107.

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՈւԿ-ների փորձագետները հաճախ գործում են ոչ թե կառուցղական քննադատության, այլ՝ պաշտոնական տեսակետի արդարացման կանխադրույթից ելնելով: Միաժամանակ, վերջիններս քավական կաշկանդված են պետական քաղաքականության շրջանակներով և ստիպված են սահմանափակել իրենց մասնագիտական ազատությունը, եթե ցանկանում են մասնակցություն և ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացում:

Մյուս կողմից թեպետ քաղաքական առաջնորդներն են սահմանում քաղաքական օրակարգը, սակայն նույնիսկ դրա շրջանակներում ՈւԿ-ների փորձագետները առաջարկում են «արևմտյան» որոշ գաղափարներ, օրինակ՝ զսպումների և հակաշիռների համակարգի, կուսակցության և պետության տարանջատման¹. կամ հանրային անվտանգության և հանցավորության դեպ արհեստավարժ պայքարի արևմտյան փորձը²: Ամեն դեպքում, փորձագետների համար երբեմն որոշակի դժվարություններ են առաջանում նորարարությունների ոլորտում իրենց մասնագիտական հետաքրքրությունների և շահապաշտականի պարտականությունների միջև հավասարակշռությունը պահպանելիս:

Հիմնվելով կիրառվող պրակտիկայի վրա՝ պետք է նշել, որ Չինաստանում փորձագետները հազվադեպ են իրապարակայնորեն քննադատում կառավարության քաղաքականությունը, սակայն նրանք կարող են իրենց գործունեությամբ որոշակիորեն ներգործել քաղաքականության վրա, անուղղակիորեն ազդել քաղաքական դերակատարների ընկալումների վրա: Օրինակ, ժայվանի խնդրով զբաղվող Չինաստանի որոշ փորձագետներ ոչ պաշտոնապես քննարկում են «Մեծ Չինաստանի համադաշնություն» ստեղծելու հնարավորությունը: Այս վերլուծաբանները պնդում են, որ համադաշնության գաղափարը առաջարկում է ժայվանի հիմնախնդրի առավել արդյունավետ լուծում, քան «մեկ պետություն, երկու համակարգ» բանաձևը³:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ թեև քաղաքական ընտրախսավը Չինաստանի ՈւԿ-ները և փորձագիտական հանրությունը օգտագործվում է՝ երկրում տարածելու և ամրապնդելու կառավարող գաղափարախոսությունը կամ լուծելու ներկուսակցական խնդիրները և հատվածական հակասությունները, այդ ՈւԿ-ները, անտարակույս, հարկ է դիտարկել որպես նոր գաղափարների ստեղծման և առաջմղման հավասարակշռված դերակատարներ:

¹ Sté'u Luo Z., The Globalization Challenge and the Role of Think Tanks in China, in J.W. Langford and K.L. Brownsey (eds), Think Tanks and Governance in Asia-Pacific region, Halifax, Nova Scotia, Institute for Research on Public Policy, 1991.

² Sté'u Tanner M.S., Changing Windows on a Changing China: The Evolving “Think Tank” System and the Case of the Public Security Sector, China Quarterly, 171 (September), 2002, էջ 559-579:

³ Sté'u Shai Ming-Chen, Stone Diane., The Chinese tradition of policy research institutes. Think tank traditions: Policy research and the politics of ideas. Edited by Stone D. and Denham A., Manchester University Press, 2004, էջ 151:

Որպես տեղեկատվության փոխանակման միջնորդներ՝ Չինաստանի ՌԱՆերը վերջին տասնամյակներում ակտիվորեն ներգրավվում են ինչպես արտերկրի իրենց գործընկերների հետ հարաբերություններում, այնպես էլ օտարերկրյա պատվիրակությունների հետ շփումների գործընթացում, ինչի շնորհիվ Չինաստանի քաղաքական ընտրախավն առավել տեղեկացված է լինում այլ երկրների քաղաքականության, նպատակների, ընթացող ներքին քննարկումների և տարրեր հարցերում դիրքորոշման մասին։ Միաժամանակ, նման շփումները և երկխոսությունները հնարավորություն են ընձեռում որոշակիորեն ազդելու Չինաստանի քաղաքականության նկատմամբ այլ երկրների վերաբերմունքի վրա՝ տեղ հացնելով սեփական տեսակետը և ներկայացնելով իրենց առարկությունները։ Այլ խոսքով, ի հավելում միջազգային խորհրդաժողովների, աշխատաժողովների, գիտաժողովների կամ առավել երկարաժամկետ շփումների ձևաչափով օտարերկրյա գործընկերներից իրենց անհրաժեշտ տեղեկատվության հավաքման՝ Չինաստանի որոշ ՌԱՆեր ներգրավված են, այսպես կոչված՝ «երկրորդային դիվանագիտության»¹ գործընթացում²։ Այսպես, ամերիկացի փորձագետների կարծիքով Չինաստանի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական աշխատանքի հիմնական մասը իրականացվում է հենց երկու երկների ՌԱՆերի մասնագետների միջև ակադեմիական փոխանակման ընթացքում³։

Այս համատեքստում նշենք նաև մեկ այլ հետաքրքրական փաստ։ 2009 թ. ՉԺՀ Կոմերցիայի նախարարության արտաքին առևտուրի և տնտեսական համագործակցության Չինաստանի ակադեմիայում ստեղծվել է Բրենդինգի կենտրոն, որը կոչված է նպաստելու համաշխարհային շուկայում չինական ապրանքների առաջնորդությանը։ Հատկանշական է, որ համանման կառույց ստեղծելու առաջարկ ժամանակին եղել է նաև Հայաստանում⁴։

¹ Ի տարրերություն պաշտոնական կամ «առաջնային դիվանագիտության» (Track I diplomacy) «երկրորդային դիվանագիտությունը» (Track II diplomacy) վերաբերում է ոչ պաշտոնական, ոչ կառավարական մակարդակով շփումներին, այդ թվում՝ անհատների, քաղաքացիների խմբերի, կազմակերպությունների միջև, որոնց հաճախ անվանում են ոչ պետական բերակատրներ։

² Stéphane Gill B., Mulvenon J., Chinese Military-Related Think Tanks and Research Institutions. China Quarterly, 171 (September), 2002, էջ 224։

³ Dumbaugh K., Martin M. F. Understanding China's Political System. Congressional Research Service. CRS Report for Congress R41007. 2009. December 31. URL: <http://www.crs.gov>

⁴ Մասնավորապես, սույն աշխատանքի համահեղինակ Վարդան Աբրյանի 2008 թ. համահեղինակությամբ լոյս տեսած հոդվածը, որում առաջարկվում էր ՀՀ առևտուրի և տնտեսական զարգացման նախարարության (այժմ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն) կառուցվածքում ստեղծել համապատասխան ստորաբաժնում, որը կզբաղվի պետության բրենդինգային քաղաքականությամբ, տե՛ս Աբրյան Վ., Բարաջանյան Կ., Պետության բրենդը և դրա ծնավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում։ «21-րդ ԳԱՐ», թիվ 4 (22), 2008, էջ 71-79։

Վերջին տարիներին Չինաստանի ՌԱԿ-ների առջև խնդիր է դրված գործակցություն և կապեր հաստատել աշխարհի տարրեր երկրների համանման կենտրոնների հետ: Որպես այս գործընթացին նպաստող միջոցառում 2009 թվականի հուլիսին Պեկինում տեղի ունեցավ ՌԱԿ-ների Համաշխարհային համաժողովը, որին մասնակցեցին ավելի քան 30 ՌԱԿ-ների ճանաչված մասնագետներ, արտերկրի ավելի քան 100 նախկին քաղաքական գործիչներ, զիտության տարրեր ոլորտների նորեյան մրցանակակիրներ և աշխարհի խոշորագույն ձեռնարկությունների գործադիր տնօրեններ:

Պետք է նշել, որ Չինաստանի ՌԱԿ-ները ակտիվորեն ներգրավվում են նաև Չինաստանի «փափուկ ուժի» հայեցալարգի մշակման գործընթացում¹: Ինչպես նշում է Մոցիալական գիտությունների Չանհայի ակադեմիայի (SASS) Տնտեսական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Քուան Հենգը (Quan Heng)²՝ Չինաստանում խորհրդատվական կառույցների ստեղծումը կապահովի ազգային և տնտեսական անվտանգությունը, կրաքելավի ազգային կառավարման համակարգը և արդիականացումը, առաջ կմղի նորաստեղծական և զարգացման քաղաքականությունները և առավել ընդհանրական առումով կամրապնդի Չինաստանի ազգային կերպարը և փափուկ ուժը³:

Չինաստանում ՌԱԿ-ների կարևորությունը այս հարցում գիտակցվում և խրախուսվում է ամենաբարձր քաղաքական մակարդակով: Ինչպես նշել է ՉԺՀ նախագահ Սի Շինփինը՝ ՌԱԿ-ները ազգային փափուկ ուժի կարևոր քաղադրիչն են, և պետք է ակտիվորեն ուսումնասիրել Չինաստանի ՌԱԿ-ների առանձնահատկությունները, ինչպես՝ կազմակերպական կառուցվածքի, այնպես էլ դրանց կառավարման տեսակետից³:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ Չինաստանի ՌԱԿ-ները գիտաժողովների, ոչ ֆորմալ քննարկումների, պաշտոնական գեկույցների և քաղաքական համառոտ ակնարկների կամ տեղեկանքների ձևով ՉԿԿ վերնախավին և ՉԺՀ կառավարությանը ապահովում են տեղեկատվությամբ, վերլուծություններով և քաղաքական խորհրդատվություններով: Միաժամանակ, վերջիններս, արևմտյան համանման հաստատությունների պես, հատուկ կամուրջի դեր են խաղում փորձագիտական հանրության և քաղաքական որոշումներ կայացնողների միջև:

¹ Չինաստանի «փափուկ ուժի» կիրառման որոշ մեխանիզմների մասին տե՛ս Աթոյան Վ., Մովսիսյան Շ., Հարավային Կովկասն ու Հայաստանը Չինաստանի արտաքին քաղաքականության մեջ. ըսած հոկայի զարթոնքը // «Բանբեր ՀՊՏՀ», N 4 (36), 2014, էջ 169–178:

² Chinese Military Think Tanks: “Chinese Characteristics” and the “Revolving Door”, Volume XV, Issue 8, (17/04/2015). URL: http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_15_Issue_8_5.pdf

³ Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends. China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), p. 16. URL: http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf


5

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆՇԱՎՈՐՈՒՄԸ

Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի՝ 2016 թ. հունվարին հրապարակած՝ աշխարհի առաջատար ուղեղային կենտրոնների վարկանշավորման գեկույցի համաձայն՝ ՈւԿ-ների քանակով Չինաստանն աշխարհում երկրորդն է (435) և զիջում է միայն ԱՄՆ-ին (1835):

Մյուս կողմից, որոշ փորձագետների գնահատմամբ՝ Չինաստանում կա 2500 հետազոտական հաստատություն, 35 հազար լրիվ դրույքով հետազոտողներով, ինչն ակնհայտորեն գերազանցում է ԱՄՆ ցուցանիշը¹:

Գծապատկեր 2-ում ‘ներկայացված է յուրաքանչյուր տարի հիմնադրված ուղեղային կենտրոնների քանակը: Ինչպես արդեն նշել ենք, ներկայիս բնորոշմամբ առաջին ուղեղային կենտրոններ Չինաստանում ստեղծվել են 1950-ականների կեսերին պետության կողմից: Մշակութային հեղափոխության տարիներին (1966–1979 թթ.) ոչ միայն նոր կենտրոններ չստեղծվեցին, այլև դադարեցին գործող կենտրոնները: Արդեն 1980-ական թթ. սկսած Չինաստանում ուղեղային կենտրոնների զարգացման նոր ալիք սկսվեց:



Գծապատկեր 2.

Չինաստանում հիմնադրված ՈւԿ-ների քանակը՝ ըստ տարիների¹

¹ “Feasible Paths of Development for Think Tanks in China”. Think Tanks in Policy Making – Do They Matter? Briefing paper. Special Issue, September 2011, p. 27. URL: <http://library.fes.de/pdf-files/bueros/china/08564.pdf>

Գծապատկերից պարզ է, որ վերջին տասնամյակում Չինաստանում ավելի շատ ՈւԿ-ներ են ստեղծվել, քան ՉԺՀ գոյության ամբողջ ընթացքում: Միաժամանակ, պետք է նշել, որ ակնհայտորեն ավելանում է ոչ կառավարական, համալսարաններին կից ՈւԿ-ների թիվը (հիմնականում տնտեսագիտության ոլորտի): Նոր ՈւԿ-ներն ունեն առավելապես տնտեսական, շրջակա միջավայրի և սոցիալական ուղղվածություն:

Հետաքրքիր փաստ է նաև այն, որ նման միտումներով հանդերձ Չինաստանի առաջատար ՈւԿ-ները նրանք են, որ ստեղծվել են մինչև Մշակութային հեղափոխությունը կամ դրանից անմիջապես հետո:

Աղյուսակ 1

Չինաստանի առաջատար ուղեղային կենտրոններ՝ իստ Զ. Մարգարի 2015 թ. գեկույցի²

<i>2015 թ. աշխարհի առաջարար ՈւԿ-ի ցանկում ներառված չինական կենտրոններ</i>	<i>Տեղը յափազով ՈւԿ-ների շարքում</i>	<i>Հիմնադրման տարեթիվ</i>
Հասարակական գիտությունների չինական ակադեմիա (Chinese Academy of Social Sciences (CASS))	31	1977
Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտ (China Institute of International Studies (CIIS))	35	1956
Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ինստիտուտներ (China Institutes of Contemporary International Relations (CICIR))	39	1980
Պետական խորհրդի զարգացման հետազոտական կենտրոն (Development Research Center of the State Council (DRC))	50	1981
Միջազգային և ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտ (Institute of International and Strategic Studies (IISS))	64	2013
Միջազգային ուսումնասիրությունների Շանհայի ինստիտուտներ (Shanghai Institutes for International Studies (SIIS))	72	1960
Յունիրուլ տնտեսագիտության ինստիտուտ (Unirule Institute for Economics)	103	1993
Չինաստանի և գլոբալացման ուսումնասիրության կենտրոն (Center for China and Globalization)	110	2008
Ֆինանսական ուսումնասիրությունների Չոնյան ինստիտուտ (Chongyang Institute for Financial Studies (RDCY))	150	2013

¹ Գծապատկերում ներկայացված են Չինաստանի 88 առաջատար ՈւԿ-ների տվյալները:
Կենտրոնների ամրողական ցանկը տես՝ հավելված 2-ում:

² McGann J., 2015 Global Go To Think Tank Index Report. URL:
http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

Վերոնշյալ ինստիտուտներից չորսը՝ Պետական խորհրդի զարգացման հետազոտական կենտրոնը, Ցունիբուղ տնտեսագիտության ինստիտուտը, Ֆինանսական ուսումնասիրությունների Չունյան ինստիտուտը, Չինաստանի և գլոբալացման ուսումնասիրության կենտրոնն ունեն տնտեսական քաղաքականության ուղղվածություն, իսկ մյուսների հետազոտական թիրախը միջազգային հարաբերություններն են:

Հաջորդիվ առավել մանրամասն կներկայացնենք Չինաստանի առավել ազդեցիկ և հայտնի ուղեղային կենտրոնները:

6

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1

Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ինստիտուտներ China Institutes of Contemporary International Relations (CICIR)



Ստեղծման տարեթիվ	1980
Տեսակը	Կառավարությանն առընթեր արտաքին քաղաքականության Ուկ
Տեղակայված է	ք. Պեկին
Կայր'	http://www.cicir.ac.cn/
Ղեկավար'	Ji Zhiye / Ցի Չիյե
Աշխատակազմ	380

CICIR-ը Չինաստանի ամենահին և ամենաազդեցիկ հետազոտական կենտրոններից է: 1965 թ. Չինաստանի կոմոնինստական կուսակցության Միջազգային կապերի բաժնի հետազոտական ստորաբաժնմանը տրվեց ինստիտուտի կարգավիճակ՝ «Ժամանակակից միջազգային հարաբերությունների ինստիտուտ» անվանմամբ: Սա Չինաստանի միակ Ուկ-ն էր, որ նաև ամբ շարունակեց գործունեությունը 1966–1979 թթ. Մշակութային հեղափոխության տարիներին: 1980 թ. ինստիտուտի հիման վրա ձևավորվեց «Ժամանակակից միջազգային հարաբերությունների չինական ինստիտուտ»: Նոյն թվականին Դեն Սյաոպինի բարեփոխումների և Չինաստանի՝ աշ-

խարի համար ավելի բաց դառնալու ֆոնին՝ *CICIR*-ը վերածվեց «բաց» ինստիտուտի, որն իրավունք ուներ համագործակցելու արտասահմանցիների հետ:

1990-ական թվականների կեսերից հնատիտուտի ազդեցությունը որպաշակիրեն նվազեց՝ պայմանավորված մի շարք առաջատար գիտաշխատողների՝ կենսաթոշակի անցմամբ, փորձառու փոխարինողների բացակայությամբ, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում Կննտրոնական կոմիտեի Արտաքին գործերի առաջատար խմբի (դրա հետ նաև՝ վերջինիս կից գործող *CICIR*-ի) դերի նվազմամբ և Արտաքին գործերի նախարարության ազդեցության մեծացմամբ:

Այսուհետեւ, *CICIR*-ն այսօր էլ զգալի ազդեցություն ունի Չինաստանի արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների կայացման գործընթացի վրա: *CICIR*-ի համեմատական առավելությունը մտում էն օպերատիվ վերլուծություն իրականացնելու կարողությունը, մեծ անձնակազմը, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրները և Կոմոնխստական կուսակցության Կննտրոնական կոմիտեի Արտաքին գործերի առաջատար խմբի և Ազգային անվտանգության նախարարության հետ սերտ կապերը¹:

CICIR-ը պետական հետազոտական կենտրոն է: Մինչև 1982 թ. գործել է Կոմոնխստական կուսակցության ներակայությամբ, 1983 թ. անցել է Ազգային անվտանգության նախարարության համակարգ, իսկ 1999 թ.-ից՝ վերատին Չինաստանի կոմոնխստական կուսակցության Կննտրոնական կոմիտեի Արտաքին գործերի առաջատար խմբի (The Foreign Affairs Leading Group - FALG) ներակայությանը: Արևմտյան փորձագետների պնդմամբ, սակայն, հնատիտուրը պահպանել է սերտ կապերը Չինաստանի ազգային անվտանգության նախարարության հետ, վարչականորեն և ֆինանսավես վերահսկում է նախարարության կողմից, թեպետ այդ փոխկապվածության փաստը չինական մամուլը հազվադեպ է ներկայացնում²: Ինչպես արդեն նշվեց, *CICIR*-ը ֆինանսավական միջոցների մեծ մասը ստանում է Պետական անվտանգության նախարարությունից³, սակայն առանձին հետազոտական ծրագրերի իրականացման համար կենտրոնը ստանում է նաև արտասահմանյան դրամաշնորհներ:

Այսօր *CICIR*-ը արտաքին քաղաքականության, միջազգային հարաբերությունների խնդիրներով զբաղվող առաջատար կենտրոններից է ինչպես

¹ Shambaugh D., China's International Relations Think Tanks: Evolving Structure and Process, 2002, p. 583

² Open Source Center, Profile of MSS-Affiliated PRC Foreign Policy Think Tank CICIR, 2011, p. 2. URL: <http://fas.org/irp/dni/osc/cicir.pdf>

³ Casarini N., The Role of Think Tanks in China. Short Term Policy Brief 33, June 2012, p. 6. URL: http://eeas.europa.eu/china/docs/division_ecran/ecran_is37_paper_33_the_role_of_think_tanks_in_china_nicola_casarini_en.pdf

Չինաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Հստ Փենսիլվանիայի համալսարանի հիշատակված վարկանշավորման զեկույցի՝ *CICIR*-ը 39-րդն է աշխարհի լավագույնների շարքում, իսկ արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների գծով լավագույն կենտրոնների շարքում 6-րդը: Նաև առաջատար դիրքեր է զբաղեցնում կառավարության առընթեր լավագույն կենտրոններ, պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտում լավագույն կենտրոններ կատեգորիաներում¹:

Աղյուսակ 2

CICIR-ի կառուցվածքը²

Ինստիտուտներ

Առուսական հետազոտությունների ինստիտուտ
Ամերիկան հետազոտությունների ինստիտուտ
Լատինամերիկյան հետազոտությունների ինստիտուտ
Եվրոպական ուսումնասիրությունների ինստիտուտ
Ճապոնական ուսումնասիրությունների ինստիտուտ
Հարավային և Հարավարևելյան Ասիայի ուսումնասիրությունների ինստիտուտ
Մերձավոր Արևելյան ինստիտուտ
Տեղեկատվական և տցիալական զարգացման ուսումնասիրությունների ինստիտուտ
Անվտանգության և սպառազինությունների վերահսկման ուսումնասիրությունների ինստիտուտ
Համաշխարհային քաղաքականության ուսումնասիրությունների ինստիտուտ
Համաշխարհային տնտեսության ուսումնասիրությունների ինստիտուտ
Ռազմական ուսումնասիրությունների ինստիտուտ
Աֆրիկայի ուսումնասիրությունների ինստիտուտ

Բաժիններ

Կորեական թերակղու ուսումնասիրությունների բաժին
Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների բաժին

Կենտրոններ

Հռոմեական և Մակաոյին առնչվող ուսումնասիրությունների կենտրոն
Էրսիկ և կրոնական ուսումնասիրությունների կենտրոն
Գլոբալացման ուսումնասիրությունների կենտրոն
Թայվանին առնչվող ուսումնասիրությունների կենտրոն
Հակաահաբեկչական ուսումնասիրությունների կենտրոն
Ճգնաժամերի կառավարման ուսումնասիրությունների կենտրոն
Շնտեսական անվտանգության ուսումնասիրությունների կենտրոն

CICIR-ն իրականացնում է բազմակողմ հետազոտություններ (գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության, տնտեսական, դիվանագիտական,

¹ McGann J., 2015 Global Go To Think Tank Index Report. URL:

http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

² URL: <http://www.cicir.ac.cn/chinese/>

ուազմական և սոցիալական հարցեր, ինչպես նաև ժայվանի, Հռուկոնգի և Մակաոյի հիմնախնդիրներ), իրազործում է Չինաստանի կառավարության հանձնարարած, ինչպես նաև տեղական և արտասահմանյան ինստիտուտների հետ համատեղ հետազոտական նախագծեր, առաջարկում է մագիստրոսական և ասպիրանտուրական ծրագրեր:

Ինստիտուտի հետազոտությունների հիմնական թիրախը Միացյալ Նահանգներն ու չին-ամերիկյան հարաբերություններն են: 2009 թ. հունիսից մինչև 2010 թ. դեկտեմբեր «Ժամանակակից միջազգային հարաբերություններ» չինարեն ամսագրի հրապարակումներից ներքին խնդիրներին չառնչվող հոդվածների 53%-ի և նոյն ամսագրի անգլերեն տարբերակի հոդվածների 60%-ի թեման եղել է Միացյալ Նահանգները¹: CICIR-ի կայքը շատ քիչ պատկերացում է տալիս կառավարության պատվերով իրականացվող հետազոտությունների մասին:

Ներկայում CICIR-ի անձնակազմը բաղկացած է մոտ 380 աշխատակից, որոնցից 150 գիտաշխատողներ են:

Հաստատության կազմում կա 13 ինստիտուտ, հետազոտական 2 բաժին և 7 կենտրոն:

Ինստիտուտի հետազոտությունների արդյունքներն ուղարկվում են կառավարության համապատասխան ստորաբաժանումներ կամ հրապարակվում են գիտական ամսագրերում: 1981 թ.-ից CICIR-ը հրապարակում է *Xiandai Guoji Guanxi* (Ժամանակակից միջազգային հարաբերություններ) ամսագիրը, որը 1986 թ. դարձել է նուամսյակային, իսկ 1993-ից հրապարակվում է ամիսը մեկ պարբերականությամբ: CICIR-ը հրապարակում է նաև «Ժամանակակից միջազգային հարաբերություններ» (Contemporary International Relations) անգլալեզու (յուրաքանչյուր ամիս) ամսագիրը, *Guoji Ziliaozhixunxi* (Միջազգային տեղեկատվական տվյալներ) ամսագիրը (յուրաքանչյուր ամիս):

Ինստիտուտի գրադարանը միջազգային հարաբերությունների հիմնախնդիրներին նվիրված գրքերի քանակով Չինաստանում համարվում է ամենախոշորը: Գրադարանում հաշվվում է մոտ 500 հազար անուն գիրք տարբեր լեզուներով, ավելի քան հազար պարբերական, թերթ և ամսագիր²:

¹ Open Source Center, Profile of MSS-Affiliated PRC Foreign Policy Think Tank CICIR, 2011, p. 5.
URL: <http://fas.org/irp/dni/osc/cicir.pdf>

² Комиссина И. Н. Научные и аналитические центры Китая. Справочник, 2012, с. 121.

6.2 Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիա



The Chinese Academy of Social Sciences (CASS)

Ստեղծման տարեթիվ	1977
Տեսակը	Չինաստանի Պետական խորհրդին առընթեր ՈՒԿ
Տեղակայված է	ք. Պեկին
Կայր՝	http://casseng.cssn.cn/
Դեկազր՝	Ուանգ Ուայգուանգ (Wang Weiguang)
Աշխատակազմ	4200

Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիան ամենաբազմակողմ հետազոտություններ իրականացնող կառույցն է: CASS-ը բարձրակարգ և նորարարական հետազոտություններ է իրականացնում փիլիսոփայության, սոցիալական գիտությունների և պետական քաղաքականության տարրեր բնագավառներում: Հիմնադրվել է 1977 թ. Չինաստանի գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության և հասարակական գիտությունների բաժնի հիմնա վրա՝ որպես բաժնի իրավահաջորդ: Վարչական առումով համարժեք է նախարարության*, Պետական խորհրդի անմիջական վերահսկողության ներքո: Մշակութային հեղափոխության տարիներին CASS-ը գրեթե ամբողջությամբ ընչացվեց: 1990-ական թվականներին Ակադեմիայի ինստիտուտների ազդեցությունը սկսեց աստիճանաբար աճել, քանի որ այն կարողացավ ընդլայնել արտասահմանյան հետազոտական կենտրոնների հետ կապերը, ինչը բարձրացրեց նրա հեղինակությունը: Վերջին տվյալներով աշխարհի առաջատար ՈՒԿների շարքում 31-րդն է: Ակադեմիան առաջատար դիրքեր է զբաղեցնում նաև կառավարության առընթեր լավագույն, ինչպես նաև քաղաքական ուղղվածությամբ հասարակական հնչեղություն ունեցող ծրագրերով ՈՒԿների շարքում:

CASS-ը հակայական կազմակերպություն է, որի հետազոտական 38 ինստիտուտներն և 90 կենտրոններն իրականացնում են մոտ 300 ոլորտ ընդգրկող հետազոտական գործունեություն: Ներկայում ակադեմիան ունի ավելի քան 4200 աշխատակից, որոնցից 3200-ը հետազոտողներ են: Միաժամանակ, ակադեմիան համագործակցում է մոտ 200 գիտահետազոտական

* CASS-ի նախագահն ունի նախարարին համարժեք կարգավիճակ և երկրի կառավարման Ավագ խորհրդատուի կոչում: Նախագահ Ուանգ Ուայգուանգը առաջատար Կուսակցության անդամների խմբի (Leading Party members' group) քարտուղարն է: Այս կառույցը որոշումներ կայացնող մարմին է, կուսակցության առաջատար անդամներից քաղաքացած կազմակերպություն, օժանդակում է Չինաստանի կոմոնիստական կուսակցության քաղաքականության իրականացմանը:

կազմակերպությունների, համալսարանների, հիմնադրամների, կառավարության ստորաբաժանումների հետ, որոնք ընգրկում են ավելի քան 80 երկիր և տարածաշրջան: Հատկանշական է, որ գործընկեր երկրների շարում նշված է նաև Հայաստանի Հանրապետությունը¹:

CASS-ը բաղկացած է ակադեմիական 6 բաժնից (Փիլիսոփայության և գրականության, Պատմության, Տնտեսագիտության, Սոցիալական, քաղաքական և իրավական ուսումնասիրությունների, Միջազգային ուսումնասիրությունների, Մարքսիստական ուսումնասիրությունների), որոնք ներառում են հետազոտական 38 ինստիտուտ: Ունի նաև հետազոտական ավելի քան 90 կենտրոն և մեկ բարձրագույն դպրոց (Հասարակական գիտությունների չինական ակադեմիայի բարձրագույն դպրոց):

Աղյուսակ 3

CASS -ի կառուցվածքը²

Փիլիսոփայության և գրականության ակադեմիական բաժին

Դրականության ինստիտուտ

Էթնիկ գրականության ինստիտուտ

Արտասահմանյան գրականության ինստիտուտ

Լեզվաբանության ինստիտուտ

Փիլիսոփայության ինստիտուտ

Համաշխարհային կրոնների ինստիտուտ

Պատմության ակադեմիական բաժին

Հնէարանության ինստիտուտ

Ժամանակակից պատմության ինստիտուտ

Համաշխարհային պատմության ինստիտուտ

Չինաստանի սահմանամերձ տարածքների պատմության և աշխարհագրության

հետազոտական կենտրոն

Թայվանի ուսումնասիրությունների ինստիտուտ

Տնտեսագիտության ակադեմիական բաժին

Տնտեսագիտության ինստիտուտ

Արդյունաբերական տնտեսագիտության ինստիտուտ

Գյուղական գարգացման ինստիտուտ

Տնտեսական ուղմանվարության ազգային ակադեմիա

Ֆինանսների և բանկային գործի ինստիտուտ

Քանակական և տեխնիկական տնտեսագիտության ինստիտուտ

Բնակչության և աշխատանքի տնտեսագիտության ինստիտուտ

Ուրբանիզացման և շրջակա միջավայրի ուսումնասիրությունների ինստիտուտ

¹ URL: http://casseng.cssn.cn/international/international_partners/

² URL: <http://casseng.cssn.cn/organizations/>

Սոցիալական, քաղաքական և իրավական ուսումնասիրությունների ակադեմիական բաժին

Իրավագիտության ինստիտուտ

Միջազգային իրավունքի ինստիտուտ

Քաղաքական գիտությունների ինստիտուտ

Էթնոլոգիայի և մարդարանության ինստիտուտ

Սոցիոլոգիայի ինստիտուտ

Սոցիալական զարգացման ռազմավարության ազգային ակադեմիա

Լրագրության և հաղորդակցման ուսումնասիրությունների ինստիտուտ

Միջազգային ուսումնասիրությունների ակադեմիական բաժին

Համաշխարհային տնտեսության և քաղաքականության ինստիտուտ

Ռուսական, արևելակորպական և կենտրոնասիական ուսումնասիրությունների ինստիտուտ

Եվրոպական ուսումնասիրությունների ինստիտուտ

Արևմտասահմական և աֆրիկյան ուսումնասիրությունների ինստիտուտ

Լատինամերիկյան ուսումնասիրությունների ինստիտուտ

Միջազգային ռազմավարության ազգային ինստիտուտ

Ամերիկյան ուսումնասիրությունների ինստիտուտ

Ճապոնական ուսումնասիրությունների ինստիտուտ

Խաղաղ զարգացման ուսումնասիրությունների ինստիտուտ

Մարքսիստական ուսումնասիրությունների բաժին

Մարքսիզմի ակադեմիա

Ժամանակակից չինական ուսումնասիրությունների ինստիտուտ

Տեղեկատվության ուսումնասիրության ինստիտուտ

Հարկ է ընդգծել նաև, որ անհրաժեշտության դեպքում կարճ ժամանակահատվածի համար ձևավորվում են հետազոտական միավորներ՝ միջզիտակարգային հետազոտական թեմաների իրականացման համար¹:

CASS-ի ինստիտուտները որոշ առումներով ինքնուրույն կառույցներ են՝ իրենց ստորաբաժանումներով, հետազոտական կազմով, պարբերականներով, համագործակցում են արտասահմանյան կառույցների հետ: Միաժամանակ, դրանք ֆինանսավորվում են պետությունից, CASS-ի դեկավար անձնակազմը ևս պետությունն է նշանակում, ուստի դժվար է ասել, թե դրանք գործում են որպես անկախ ինստիտուտներ:

Ակադեմիայի ստորաբաժանումներից առանձնակի ուշադրության է արժանի Համաշխարհային տնտեսության և քաղաքականության ինստիտուտը (The Institute of World Economics and Politics (IWEP)): Ինստիտուտը հիմնադրվել է 1964 թ., իսկ 1977 թ. դարձել CASS-ի ստորաբաժանումներից մեկը: IWEP-ն հասուն դեր ունի Չինաստանի տնտեսական քաղաքականության

¹ Mi N., Exploring the Political Roles of Chinese Think Tanks: A Case Study of China's Three Gorges Project Decision-Making, 2008, p. 21. URL: http://scholar.lib.vt.edu/theses/available/etd-05122008-120315/unrestricted/Thesis_of_Na_Mi.pdf

ուազմավարության մշակման և տնտեսական քարեփիսումների մշակման գործում¹: Մար-Գանի հիշատակված գեկուցում ինստիտուտը, որպես առանձին կառույց, ներքին, ինչպես նաև արտաքին տնտեսական քաղաքականության հարցերով աշխարհի առաջատար ՈւԿ-ներից մեկն է:

Ի տարբերություն մյուս կառավարական ՈւԿ-ների՝ *CASS*-ի ազդեցությունը քաղաքականության որոշումների կայացման վրա այնքան էլ մեծ չէ, ինչն ունի մի քանի պատճառ: *CASS*-ը ակադեմիական կառույց է, ինստիտուտների մեծ մասը զբաղվում է ակադեմիական բնույթի հիմնարար հետազոտություններով, տեսական հարցերով և, ըստ էության, ամրողությամբ կենտրոնացած չէ քաղաքական հետազոտությունների վրա: Ակադեմիայի առավել տեսական և երկարաժամկետ հետազոտությունները պակաս երատապ են որոշում կայացնողների համար: Բացի դրանից, Ակադեմիայի ինստիտուտները չունեն դեպի դեկադարակարություն այն ինստիտուցիոնալ լծակները, որ ունի, օրինակ՝ *CICIR*-ը: *CASS*-ի հետազոտողները հետազոտությունների արդյունքները հասցնում են որոշում կայացնողներին մեծավ մասամբ անձնական կապերի չնորիկվ²: Լինելով Չինաստանի քաղաքական համակարգի համեմատարար նվազ ազդեցիկ դերակատար, *CASS*-ը նաև ներքին տեղեկատվության նվազ հասանելիություն ունի, քան մյուս պետական ՈւԿ-ները: Որոշակիորեն առանձնանում են *CASS*-ի միջազգային հարաբերությունների ինստիտուտները, որոնք չնորիկվ արտասահմանյան հետազոտական ինստիտուտների հետ լայն կապերի Ակադեմիային հնարավորություն են ընձեռում հանդես գալու որպես կամուրջ Չինաստանի կառավարության և արտասահմանյան դիվանագիտական կառույցների միջև՝ հատկապես ճգնաժամային ժամանակաշրջաններում:

Կառավարության որոշումների կայացման վրա առավել էական ազդեցություն ունեն Ակադեմիայի տարածաշրջանային ուսումնասիրությունների ութ ինստիտուտները: Մասնավորապես՝ ամերիկյան և եվրոպական ուսումնասիրությունների ինստիտուտները բավական ազդեցիկ են:

Պետության հաստատած հետազոտական նախագծերից բացի՝ *CASS*-ը նախագծեր է իրականացնում նաև ձեռնարկությունների և ընկերությունների համար, համագործակցում միջազգային կառույցների և ակադեմիական ինստիտուտների հետ, խորհրդատվական ծառայություններ մատուցում այլ կազմակերպություններին և ինստիտուտներին:

¹ Առավել մանրամասն տե՛ս McGann J., Viden A, Rafferty J., How Think Tanks Shape Social Development Policies, 2014, էջ 200-212:

² Casarini N., The Role of Think Tanks in China, 2012, p. 11. URL:
http://eeas.europa.eu/china/docs/division_ecran/ecran_is37_paper_33_the_role_of_think_tanks_in_china_nicola_casarini_en.pdf

Ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետությունն է: Վերջին քարեւ փոխումներով՝ կառավարությունը խրախուսում է այլ աղբյուրներից (արտասահմանյան հիմնադրամներից և մասնավոր գործարար հատվածից) *CASS*-ի սեփական ֆոնդերի ավելացումը: Օրինակ, գրեթե գնման ձևով աշակցություն է ստանում Ճապոնիայի հիմնադրամից:

6.3

Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտ China Institute of International Studies (CIIS)



Ստեղծման տարեթիվ

1956

Տեսակը

Արտարին գործերի նախարարությանն առընթեր Ուկ

Տեղակայված է

Ռ. Պեկին

Կայր՝

<http://www.ciis.org.cn/>

Ղեկավար՝

Սու Գե (Su Ge)

Աշխատակազմ

100

Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտը (*CIIS*) պետական ուղևողային կենտրոնի դասական օրինակ է, ԶԺՀ Արտարին գործերի նախարարությանը կից: *CIIS*-ը իրականացնում է արտարին քաղաքականության հարցերի լայն շրջանակին առնչվող հետազոտություններ և վերլուծություններ:

Դեռևս 1956 թ. հիմնադրվել է Միջազգային հարաբերությունների ինստիտուտը, որի նպատակն է ուսումնասիրել քաղաքացիների բողոքի ցուցերը Լեհաստանում, Խորհրդային Միությունում և Հունգարիայում¹: «Մշակութային հեղափոխության» տարիներին ինստիտուտը դադարեց գործել և վերսկսել է աշխատանքները միայն 1973 թ.: 1986 թ. ինստիտուտը վերանվանվել է Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտ (China Institute of International Studies):

CIIS-ի անձնակազմը բաղկացած է մոտ 100 հետազոտողից: Նրանց շարքում են դիվանագետներ, առաջատար մասնագետներ և միջազգային հարաբերությունների նշանավոր փորձագետներ (օրինակ՝ Ինստիտուտի նախագահ Սու Գեն ԱՄՆ-ում Չինաստանի դեսպանի նախկին խորհրդականն է, եղել է Սուրինամում, Իոլանդիայում Չինաստանի դեսպանը, փոխ-

¹ Kaczmarek T., Think tanks and their impact on the new economic policy of China, 2015, p. 2. URL: http://www.kaczmarek.waw.pl/wp-content/uploads/2015/04/tkaczmarek_art_thinktanki_chiny.pdf

նախագահ Ժուան Ցոնցզեն (Ruan Zongze)¹ ԱՄՆ-ում Չինաստանի դեսպանի խորհրդականը):

Ինստիտուտը բաղկացած է հետազոտական ութ բաժնից¹

Այլուսակ 4 CIIS-ի կառուցվածքը

Բաժիններ

Գլոբալ ռազմավարության բաժին

Տեղեկատվական և հեռանկարային վերլուծություն

Ամերիկան ուսումնասիրություններ

Ասիա-խաղաղօվկիանոսյան անվտանգություն և համագործակցություն

ԵՄ ուսումնասիրություններ

Զարգացող երկրների ուսումնասիրություններ

Չանհայի համագործակցության կազմակերպության ուսումնասիրություններ

Համաշխարհային տնտեսության և զարգացման ուսումնասիրություններ

CIIS-ն ունի նաև հատուկ հետազոտական վեց կենտրոն, որոնք գրադարձության բառում են ԵՄ, Մերձավոր Արևելքի, հարավ-խաղաղօվկիանոսյան, Չինաստանի էներգետիկ ռազմավարության, Չինաստանի ծայրամասային նախանգների անվտանգության, համաշխարհային տնտեսության և անվտանգության հարցերի ուսումնասիրությամբ: Կենտրոնում գործում է գրադարան և տեղեկատվական կենտրոն: Գրադարանն ընդգրկում է 300 հազարից ավելի գիրք, միջազգային հարաբերությունների վերաբերյալ հավաքածուն երկրում լավագույններից է:

CIIS-ի հետազոտության արդյունքները հաշվետվությունների ձևով ներկայացվում են երկրի արտաքին քաղաքականություն իրականացնողներին և պատասխանատուններին, ինչպես նաև տպագրվում գրքերի և հոդվածների տեսքով: CIIS-ը հրապարակում է «Չինաստանի միջազգային ուսումնասիրություններ» (China international studies) պարբերականը (եռամսյակը մեկ), որը 2005 թվականից լույս է տեսնում նաև անգլերեն: Այն արտաքին քաղաքականության վերաբերյալ ամենից շատ վաճառվող ամսագրերից մեկն է Չինաստանում:

Ինստիտուտում հետազոտությունները իիմնականում կենտրոնացած են ուսումնասիրության ունեցող միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության, մասնավորապես՝ միջազգային քաղաքականության և համաշխարհային տնտեսության հարցերի վրա: CIIS-ի աշխատանքներն ընդգրկում են նաև աշխարհում տեղի ունեցող գլխավոր իրադարձությունները:

¹ Տե՛ս Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի պաշտոնական կայքը՝ URL: <http://www.ciis.org.cn/english/>

թյունների և հրատապ հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծություններ, մեկնաբանություններ և խորհրդատվություններ: Հարկ է ընդգծել, սակայն, որ այն գերծ է մսում ռազմական հարցերի դիտարկումից¹:

Կենտրոնն անցկացնում է սեմինարներ և կոնֆերանսներ՝ քննարկելու միջազգային զարգացումները և խթանելու այդ հարցերին առնչվող ուսումնասիրությունները: Այն ստեղծել է ակադեմիական փոխանակման ցանց և կանոնավոր հանդիպումների հետ՝ իրականացնելով համատեղ նախագծեր ինչպես չինացի, այնպես էլ արտասահմանյան գիտնականների հետ՝ համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շորժ: Հստ այդմ էլ Փինանսավորում ստանում է նաև այլ աղբյուրներից (օրինակ՝ Ֆորդ հիմնադրամից):

Ժեպետ *CIIS*-ը միջազգային հարաբերությունների ամենահին հետազոտական կենտրոններից մեկն է Չինաստանում, մինչև վերջերս պատմականորեն կարևոր դերակատարում չի ունեցել Չինաստանի արտաքին քաղաքանակության ձևավորման գործընթացում: Ավելի ուշ ստեղծված *CICIR*-ը ավելի մեծ ազդեցություն ուներ որոշումների կայացման գործընթացների վրա: Նվազ ազդեցիկ լինելու պատճառներից մեկն էլ, թերևս, այն էր, որ *CIIS*-ի անձնակազմի մեծ մասը, լինելով փորձառու դիվանագետներ, չուներ բարձրական հետազոտությունների իրականացման փորձ:

1990-ական թվականներին Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի Արտաքին գործերի առաջատար խմբի և *CICIR*-ի ազդեցության թուլացման ֆոնին *CIIS*-ը զգայի առաջխաղացում ունեցավ: Դրան նպաստեց նաև 1998 թ. Չինաստանի Պետական խորհրդի հետազոտական կենտրոնի՝ Միջազգային հարաբերությունների չինական կենտրոնի (China Center for International Studies) ընդգրկումը *CIIS*-ի կազմի մեջ, ֆինանսավորման նոր աղբյուրների գոյացումը, ինչպես նաև՝ ինստիտուտի համալրումը Չինաստանի առաջատար համալսարանների շրջանավարտներով, որոնք վերապատրաստման էին ուղարկվում արտերկիր: Առանձնակի կարևոր նշանակություն ունեցավ ինստիտուտի համագործակցության ընդլայնումը. Ներկայումս *CIIS*-ը դարձել է աշխարհի տարրեր երկրների արտաքին գործերի նախարարությունների առաջատար հետազոտական կենտրոնների լիիրավ գործընկերը²: Մաք-Գանի զեկույցում աշխարհի լավագույն Ռուսների շարում *CIIS*-ը զբաղեցրել է 35-րդ տեղը՝ առաջ անցնելով *CICIR*-ից:

¹ Комиссия И., Научные и аналитические центры Китая: Справочник, 2012, с. 143.

² Ahmad M., The Role of Chinese Think Tanks in Foreign Policy Making: Growing Influence and Political Limitations, 2008, p. 400. URL:
http://qurtuba.edu.pk/thedialogue/The%20Dialogue/3_3/05_mahmood_ahmad.pdf

6.4

Պետական խորհրդի զարգացման հետազոտական Development Research Center of the State Council (DRC)



Ստեղծման տարեթիվ	1980
Տեսակը	Կառավարությանն առընթեր տնտեսական քաղաքականության Ուկ
Տեղակայված է	ք. Պեկին
Վայր՝	http://en.drc.gov.cn/
Ղեկավար՝	Լի Ուի (Li Wei)
Աշխատակազմ	160

Պետական խորհրդի զարգացման հետազոտական կենտրոնը Չինաստանի ամենահեղինակավոր և ամենազդեցիկ վերլուծական կենտրոններից մեկն է: Կենտրոնն իրականացնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների համալիր ուսումնական հետազոտություններ: DRC-ը մակրոտնտեսական քաղաքականության հետազոտությունների և խորհրդատվության խնտիուստ է, գործում է Չինաստանի Պետական խորհրդի անմիջական վերահսկողությամբ:

1980–1981 թթ. Պետական խորհուրդը հիմնադրեց հետազոտական չորս կենտրոն՝ (Տնտեսական հետազոտությունների կենտրոն, Տեխնոլոգիական տնտեսության հետազոտությունների կենտրոն, Գների հետազոտության կենտրոն, Գյուղական զարգացման հետազոտությունների կենտրոն): 1985 թ. հունիսին առաջին երեք կենտրոնները միավորվեցին՝ ձևավորելով Պետական խորհրդի տնտեսության, տեխնոլոգիաների և հասարակության զարգացման հետազոտական կենտրոնը: 1990 թ. հունվարին Կենտրոնը ստացավ ներկայիս անվանումը: Դրա հետ մեկտեղ Գյուղական զարգացման հետազոտական կենտրոնի որոշ գործառույթներ և անդամներ ևս միավորվեցին DRC-ին¹: Չինացի հայտնի տնտեսագետ Մա Հոնգ (Ma Hong) դարձավ կենտրոնի առաջին տնօրենը: 1980 թ. համարվում է DRC-ի ստեղծման տարեթիվը:

Չինաստանի իշխանությունների կազմած վարկանշավորման համաձայն՝ Կենտրոնը երկրի լավագույն Ուկ-ների շարքում զիջում է միայն CASS-ին²: Հատ Մար-Գանի գեկուցի՝ աշխարհի առաջատար Ուկ-ների շար-

¹ DRC celebrates its 35th anniversary. URL: http://www.chinadaily.com.cn/m/drc/2015-07/15/content_21438154.htm

² Li Ch., China's New Think Tanks: Where Officials, Entrepreneurs, and Scholars Interact, p. 6. URL: <http://www.hoover.org/sites/default/files/uploads/documents/CLM29CL.pdf>

բում *DRC*-ն զրադեցնում է 50-րդ տեղը: Բացի այս, *DRC*-ն ներքին տնտեսական, կրթական, առողջապահական քաղաքականության, միջազգային հարցերով զրադարձող կառավարությանն առընթեր, որակյալ կառավարում ունեցող, քաղաքական ուղղվածությամբ հասարակական հնչեղություն ունեցող ծրագրերով աշխարհի լավագույն ՈՒԿ-ների կատեգորիաներում զրադեցնում է առաջատար դիրքեր¹:

Կենտրոնի հիմնական գործառույթը տնտեսական և սոցիալական զարգացման ռազմավարական, երկարաժամկետ խնդիրների շուրջ հետազոտությունների իրականացումն է և Պետական խորհրդի Կենտրոնական կոմիտեին խորհրդատվության տրամադրումը: Հիմնադրման օրվանից ակտիվութեն ներգրավված է քաղաքականության ձևավորման՝ ներառյալ երկրի տնտեսական և սոցիալական զարգացման 5-ամյա պլանի, երկարաժամկետ զարգացման ծրագրերի, կարևորագույն բարեփոխումների և բացության քաղաքականության ձևավորման գործընթացում: Կենտրոնի հետազոտական աշխատանքները մեծ ներդրում ունեն երկրի արդյունաբերական, գիտատեխնիկական, ֆինանսական քաղաքականության, տարածաշրջանային զարգացման ռազմավարության, արտաքին տնտեսական քաղաքականության մշակման գործում: *DRC*-ն համագործակցում է արտասահմանյան կառավարական, գիտական և արդյունաբերական կազմակերպությունների հետ՝ իրականացնում համատեղ հետաքրքրություն ներկայացնող նախագծեր: Իրազործում նաև է մի շարք հետազոտական նախագծեր՝ միջազգային կառույցների ֆինանսավորմամբ: *DRC*-ն կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ պետական պաշտոնյանների համար:

Կենտրոնն ունի շուրջ 160 աշխատակից, որոնցից 120-ը՝ գիտաշխատող: Կենտրոնն ունի գիտական 7 բաժին և 9 ինստիտուտ:

Կենտրոնը հրապարակում է հոդվածներ, գրքեր, աշխատանքային փաստաթղթեր, վեց պարբերական՝ *China Development Review* (եռամյակային, անգլերեն), *Management World* (լույս է տեսնում ամեն ամիս), *China Economic Times* (լրագիր, ամեն օր), *The Almanac of China's Economy* (տարեկան), *China Economic Report*, *China Development Observation* (լույս է տեսնում ամիսը մեկ):

DRC-ն տնտեսագիտական ուղղվածության ամենաառաջատար հետազոտական կենտրոնն է Չինաստանում: *DRC*-ի ազդեցության տարածման հիմնական ուղին բարձրակարգ գիտական կոնֆերանսներն ու ֆորումներն են, ինչպես, օրինակ՝ Չինաստանի զարգացման ամենամյա ֆորումը²:

¹ McGann J., 2015 Global Go to Think Tank Index Report. URL:

http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

² Zhu X., The Rise of Think Tanks in China. China Policy Series, 28. London; New York: Routledge, 2013, p. 61.

Աղյուսակ 5**DRC-ի կառուցվածքը¹****Հետազոտական բաժիններ**

Մակրոտնտեսական հետազոտությունների բաժին

Արտաքին տնտեսական կապերի բաժին

Տարածաշրջանային տնտեսության և գարզացման ռազմավարության բաժին

Արդյունաբերական տնտեսության հետազոտական բաժին

Գյուղական տնտեսության հետազոտական բաժին

Տեխնա-տնտեսական հետազոտությունների բաժին

Սոցիալական գարզացման հետազոտական բաժին

Ինստիտուտներ

Շուկայական տնտեսության ինստիտուտ

Ձեռնարկատիրական հետազոտական ինստիտուտ

Ֆինանսական հետազոտությունների ինստիտուտ

Միջազգային տեխնոլոգիաների և տնտեսության ինստիտուտ

Համաշխարհային գարզացման ինստիտուտ

Եվրասիական սոցիալական գարզացման հետազոտական ինստիտուտ

Ասիա-աֆրիկյան գարզացման հետազոտական ինստիտուտ

Էթնիկ փորձարանանության լսմբերի գարզացման հետազոտական ինստիտուտ

Հոնկոնգի և Մակաոյի հարցերով ինստիտուտ

Կենտրոնի ամիջական վերահսկողությամբ գործող կենտրոններ

Ռեսուրսների և շրջակա միջավայրի հետազոտական ինստիտուտ

Պետական կառավարման և մարդկային ռեսուրսների ինստիտուտ

Չինաստանի ցյուղական աշխատուժի ասոցիացիա

Քաղաքային և ցյուղական գարզացման Չինաստանի միջազգային ասոցիացիա

Չինաստանի ձեռնարկատիրական գնահատման ասոցիացիա

Բարեփոխումների և գարզացման չինական ինստիտուտ

Չինաստանի գարզացման հետազոտական իիմսադրամ

Լինելով կառավարությանն առընթեր հետազոտական կենտրոն՝ վերջին տարիներին DRC-ն առավել մեծ խնդավարություն է դրսւորում: Մի կողմից՝ Կենտրոնը ակտիվորեն համագործակցում է արտասահմանյան կազմակերպությունների հետ՝ ավելի լավ կլասերու արտասահմանյան փորձագետների մոտավոր աջակցությունը: Մյուս կողմից՝ հետազոտական կենտրոնը, որն ավանդաբար գործել է կենտրոնական կառավարության քաղաքականությանը համահունչ, այժմ հրապարակայնորեն քննադատում է կառավարության ներկայիս քաղաքականության տեսլականը: Օրինակ, 2003 թ. DRC-ն և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը իրականացրին «Չինաստանի առողջապահական համակարգի բարեփոխումներ» հետազոտական նախագիծը: 2005 թ. գարնանը համատեղ հետազոտություն իրա-

¹ URL: <http://en.drc.gov.cn/departments.html>

կանացնողների խումբը հրապարակեց վեց հաշվետվություն և մեկ ընդհանուր հաշվետվություն, որոնցում ասվում էր, որ առողջապահական համակարգի բարեփոխումներն անհաջող են եղել և, կարելի է ասել՝ ձախողվել են:

**6.5 Միջազգային և ռազմավարական
ուսումնասիրությունների ինստիտուտ (IISS)
(սահմանում հայտնի որպես Միջազգային և ռազմավարական
ուսումնասիրությունների կենտրոն)**

Institute of International and Strategic Studies (IISS)
(formerly known as Center for International and Strategic Studies)



Ստեղծման տարեթիվ	2013
Տեսակը	Համալսարանին կից գործող ՈւԿ, կիսապետական
Տեղակայված է	Պեկին
Կայք'	http://www.iiss.pku.edu.cn/
Ղեկավար՝	Ուանգ Չզիսի /Wang Jisi
Աշխատակազմ	8

Պեկինի համալսարանի Միջազգային և ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտը հիմնադրվել է 2013 թ. հոկտեմբերին: Ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է համաշխարհային քաղաքականությունը, միջազգային անվտանգությունը, գլոբալ կառավարումը, գերտերությունների արտաքին կապերը:

Լավագույն ՈւԿ-ների շարքում աշխարհում 64-րդն է: Համալսարանին կից լավագույն ՈւԿ-ների շարքում 11-րդը:

IISS-ի Պեկինի համալսարանի Միջազգային և ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի իրավահաջորդն է: Վերջինս հիմնադրվել է 2007 թ. և իրապարակել բարձրորակ մի շարք աշխատանքներ: Ղեկավարվելով Պեկինի համալսարանի կողմից, IISS-ը դասավանդման և կառավարման առումն կցված է Համալսարանի Միջազգային ուսումնասիրությունների դպրոցին (School of International Studies of Peking University):¹ Դպրոցը ձևավորվել է 1996 թ., ունի գիտահետազոտական 20 կենտրոն:

IISS-ի նպատակն է ռազմավարական գաղափարներ և քաղաքականության խորհրդատվություն մատուցել կառավարչական գործակալություններին, ձեռնարկություններին և Զինաստանի ու արտասահմանի տարարնույթ այլ ինստիտուտների: IISS-ը կազմակերպում է կոր սեղաններ, սեմինարներ,

¹ URL: <http://www.iiss.pku.edu.cn/>

կոնֆերանսներ, որոնք հնարավորություն են ընձեռում մասնագիտներին, գիտնականներին և ուսանողներին փոխանակելու գաղափարներ և քննարկելու քաղաքական հիմնախնդիրներ:

IISS-ը արտաքին կապերն ու միջազգային ուսումնավարությունը սահմանում է որպես հետազոտական աշխատանքի առաջնահերթ ուղղություն: Ինստիտուտում խրախուսվում են նաև Էկոլոգիական միջավայրի, էներգետիկ զարգացման, հանրային առողջապահության, բնական աղետների, կիբեռանվտանգության և ոչ ավանդական անվտանգության այլ հարցեր:

IISS-ը հրապարակում է տարածույթ աշխատանքներ, ներառյալ թեմատիկ փոխադարձները, որոնք կոչվում են Միջազգային և ուսումնավարական ուսումնասիրությունների հաշվետվություն, մենագրություններ և Չինաստանի ուսումնավարության ամենամյա դիտարկումը: Այն նաև կառավարական ինստիտուտների հանձնարարած հաշվետվություններ է ներկայացնում: Ինստիտուտը թրեյնինգային ծրագրեր է իրականացնում, ունի նաև այցելու գիտնականներ:

IISS-ը իրականացնում է սեփական հետազոտական նախագծերը, ունի սեփական բյուջե և գրասենյակային տարածք, համագործակցում է այլ ինստիտուտների հետ՝ ինչպես Պեկինի համալսարանի ներսում, այնպես էլ դրասում: Օրինակ, ամերիկյան MacArthur Foundation-ից Պեկինի համալսարանի Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնը ստացել է 2.1 մին ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ միջազգային անվտանգության առնչվող հետազոտական մի շարք նախագծերի աջակցման նպատակով¹:

6.6

Միջազգային ուսումնասիրությունների Շանհայի ինստիտուտներ

Shanghai Institutes for International Studies (SIIS)



Ստեղծման տարեթիվ

1960

Տեսակը

Կիսապետական

Տեղակայված է

Շանհայ

Կայք՝

<http://en.siis.org.cn/>

Դեկան՝

Chen Dongxiao / Չեն Դոնգսյան/

Աշխատակազմ

80

Միջազգային ուսումնասիրությունների Շանհայի ինստիտուտները միջազգային քաղաքականության, տնտեսության, անվտանգության ուսումնա-

¹ URL: <https://www.macfound.org/grantees/638/>

բոլյան և Չինաստանի արտաքին հարաբերությունների համընդգրկուն և բազմակողմ հետազոտություններ իրականացնող կազմակերպություն է, կոչված աշակելու Չինաստանի արդիականացմանն ու տնտեսական զարգացմանը: *SIIS*-ը հիմնադրվել է 1960 թվականին:

Աշխարհի առաջատար ՈւԿ շարքում Ինստիտուտը 2015 թ. գրադեցնում է 72-րդ տեղը: Աշխարհում առաջատար դիրքեր է գրադեցնում նաև որպես արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների, կառավարությանն առընթեր լավագույն կենտրոն: 2013–2014 թթ. «ՈւԿ-ների բողարկած լավագույն քաղաքական ուսումնասիրություն» կատեգորիայում Ինստիտուտի «Համատեղ ուսումնասիրություն և զարգացում գերտերությունների՝ Չինաստանի և Միացյալ Նահանգների միջև հարաբերությունների նոր մոդելի կառուցում» հետազոտությունը 9-րդն է:

Ինստիտուտի հետազոտությունների թիրախն են ԱՄՆ-ը, Շապոնիան, Եվրոպան, Ռուսաստանը և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանները, գերտերությունների միջև հարաբերությունները և Չինաստանին սահմանակից երկրները: *SIIS*-ը ավանդաբար ունի Մերձավոր Արևելքի ու ԱՄՆ-ի ուսումնասիրման ավելի ուժեղ հետազոտական կարողությունները: Հիմնվելով միջազգային հարաբերությունների տեսության և միջազգային կապերի դիմամիլկ փոփոխության ուսումնասիրության վրա, *SIIS*-ը միջնաժամկետ և երկարաժամկետ հետազոտություններ է իրականացնում ժամանակակից միջազգային քաղաքականության, տնտեսության և անվտանգության կարևորագույն հարցերի վերաբերյալ՝ կառավարությանն ապահովելով հետազոտական հաշվետվություններով, հանրությանը ներկայացնելով ամսագրեր՝ հանրայնացնելու միջազգային հարաբերությունների վերաբերյալ գիտելիքները: Սակայն այս ինստիտուտը ևս, ինչպես *CIIS*-ը, զերծ է մոտ 80 հետազոտող, ներառյալ՝ 30 ավագ գիտաշխատող, որոնք իմաստակ ներկայացնում են ֆուդանի համալսարանը, ինչպես նաև ԱՄՆ և Եվրոպայի առաջատար բուհերում կրթություն ստացած փորձագետներ: Ինստիտուտը բաղկացած է հետազոտական 6 կենտրոնից և 7 ինստիտուտներից:

SIIS-ը հրապարակում է պարբերականներ՝ Միջազգային հարաբերությունների ուսումնասիրություն (Survey of international affairs), Միջազգային դիտարկում (International review), Համաշխարհային հետանկարներ (World outlook), *SIIS*-ի ամսագիր (SIIS journal), ինչպես նաև գրքեր, հոդվածներ, մելքարանություններ, *SIIS*-ի տարեկան հաշվետվություններ: Նրա գիտական հրապարակումների մեջ կարելի է առանձնացնել Global Review-ն՝ անգլերենով:

Աղյուսակ 6

SIIS-ի կառուցվածքը¹**Կենտրոններ**

Ամերիկյան ուսումնասիրությունների կենտրոն

Ասիա-խաղաղօվկիանոսյան ուսումնասիրությունների կենտրոն

Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների կենտրոն

Արևմտյան Ասիայի և Աֆրիկայի ուսումնասիրությունների կենտրոն

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն

Չովային և բևեռային ուսումնասիրությունների կենտրոն

Ինստիտուտներ

Միջազգային ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտ

Գլոբալ կառավարման ուսումնասիրությունների ինստիտուտ

Համաշխարհային տնտեսության ուսումնասիրությունների ինստիտուտ

Արտարքին քաղաքականության ուսումնասիրությունների ինստիտուտ

Համեմատական քաղաքականության և հանրային քաղաքականության ինստիտուտ

Ժայվանի, Հոնկոնգի և Մակաոյի ուսումնասիրությունների ինստիտուտ

Տեղեկատվության մշակման և ուսումնասիրությունների ինստիտուտ

Ֆինանսավորման հիմնական աղբյուրը Շանհայի քաղաքապետարանն է, սակայն առանձին հետազոտությունների գծով ֆինանսավորում ստանում է նաև այլ աղբյուրներից: Օրինակ, «Չին-ամերիկյան հարաբերությունները նոր միջազգային կարգի համատերասում» հետազոտական նախագծի համար 2006 թ. ֆորդ հիմնադրամից ստացել է 80 հազար ԱՄՆ դոլարի դրամաշնորհ²: Ինստիտուտի տարեկան բյուջեն 2013 թ. դրությամբ կազմել է 40.4 մին յուան (≈ 6.4 մին ԱՄՆ դոլար)³, որի 82.3%-ը բաժին է ընկնում Շանհայի մունիցիպալ կառավարության հատկացումներին, 9.7%-ը՝ միջազգային նվիրատվություններին և 7.9%-ը՝ նախագծերի ֆինանսավորմանը:

SIIS-ը չսորհում է մագիստրոսական աստիճաններ: 1979 թ. սկզբից SIIS-ը միջազգային քաղաքականության և միջազգային կազմակերպությունների հետքուհական կրթություն է իրականացնում:


Ինստիտուտը համագործակցային հարաբերություններ է հաստատել հարյուրավոր համալսարանների և առաջատար հետազոտական ինստիտուտների հետ Չինաստանում և 30 այլ երկրներում, հովանավորում է քաղմարիվ սեմինարներ, հրավիրում է առաջատար արտասահմանյան գիտնականների՝ ակադեմիական փոխանակության նպատակով, հովանավորում է միջազգային կոնֆերանսներ, ուղարկում է իր գիտաշխատողներին արտա-

¹ URL: <http://www.cicir.ac.cn/chinese/>

² URL: <http://www.fordfoundation.org/grants/grantdetails?grantid=102602>

³ SIIS 2013 Annual Report.

սահման՝ դասախոսությունների և կոնֆերանսների, ձևավորում է համագործակցային նախագծեր:



Գծապատկեր 3

SIIS-ի 2013 թ. բյուջեն

Վարչականորեն *SIIS*-ը միշտ եղել է Չանհայի քաղաքապետարանի վերահսկողության ներքո, սակայն երկար տարիներ ուղղակի կապեր է ունեցել Արտաքին գործերի նախարարության հետ (ներադրվում է, որ դրանք խզվել են 1980-ականներին):¹

SIIS-ը հիմնադրվել է Չանհայի այն ժամանակվա քաղաքապետի կողմից և ըստ այդմ հիմնադրման պահից սկսած կապեր է պահպանում Չանհայի տեղական կառավարման մարմինների հետ: Թեև Պեկինի գործընկերների՝ *CICIR*-ի կամ *CIIS*-ի համեմատ ունի ավելի փոքր անձնակազմ, սակայն *SIIS*-ի ստեղծած արդյունքը միշտ եղել է ավելի բարձր: Պեկինից հեռավորությունը նաև ենթադրում է, որ այն գաղափարապես ավելի անկախ է և ի վիճակի է թողարկելու վերլուծություններ և քաղաքական առաջարկներ, որոնք տարբեր են ստանդարտ քաղաքական գծից: Ինստիտուտի անձնակազմի ընսարկումները միշտ ավելի բաց են եղել, քան Պեկինի Ռուս-ներում, որոնք շատ հաճախ կրկնում են կուսակցության գիծը: *SIIS*-ը մերձ կապեր ունի Չինաստանի պաշտոնյաների հետ, որոնք ծագումով Չանհայից են: Այդ իսկ պատճառով ինստիտուտի ազդեցությունը տարբեր ժամանակներում տարբեր է՝ կախված Քաղյուրյոի և բարձրաստիճան այլ մարմինների կազմից: Օրինակ՝ Յայան Յանմինը (Jiang Zemin) հաճախ է դիմել *SIIS*-ի խորհրդատվությանը իր՝ քաղաքը կառավարելու օրոք և հետագայում որպես ՉԿԿ գլխավոր քարտուղար և Չինաստանի նախագահ:

¹ Shambaugh D., China's International Relations Think Tanks: Evolving Structure and Process, 2002, p. 594.

6.7

Յունիրուլ տնտեսագիտության ինստիտուտ Unirule Institute for Economics



Ստեղծման տարեթիվ	1993
Տեսակը	Մասնավոր, շահույթ չհետապնդող հաստատություն
Տեղակայված է	Պեկին, Չինաստան
Վայր՝	http://english.unirule.org.cn/
Ղեկավար՝	Հոնգ Շեն (Hong Sheng)
Աշխատակազմ	35

1990-ական թվականների սկզբներին պետական հետազոտական որոշ կենտրոններ, քայլվելով ֆինանսական միջոցների սահմանափակությանը, վերակազմավորվեցին կիսապետական հետազոտական կենտրոնների: Ազատականացման ալիքը սկիզբ առավ 1992 թ., երբ տնտեսագետներն ու ձեռնարկատերները հիմնեցին պետությունից անկախ կառավարվող ուղևորական կենտրոններ: Սա ի հայտ բերեց քավական անկախ Ռուսական բարեկանության առումով, որոնք ավելի ներ ուղղվածություն ունեցող էին, թե՛ ֆինանսական աջակցության տեսանկյունից: Դրա առաջին օրինակը դարձավ շահույթ չհետապնդող Յունիրուլ տնտեսագիտության ինստիտուտը, որը հիմնադրվեց 1993 թ.: Իրավես, Յունիրուլը որևէ կառավարական մարմնից ֆինանսական օժանդակություն չի ստանում, փոխարենը կախված է Չինաստանի և արտասահմանի ինստիտուտների հասարակական նվիրատվություններից և առանձին նախագծերի համար դրամաշնորհներից: Քանի որ այս երկրում հասարակական կազմակերպության կարգվիճակը ստանալը բավական բարդ և դանդաղ գործընթաց էր, Յունիրուլը սկզբնապես գրանցվեց որպես գործարար կազմակերպություն: Երբ վերջապես կարողացավ կցվել Ֆենստայ շրջանի Sci-Tech վարչությանը (Վերջինս պետական գործակալություն է), այն դարձավ օրինական շահույթ չհետապնդող ինստիտուտ՝ միաժամանակ պահպանելով արդյունաբերական և առևտրային կազմակերպության սկզբնական բնույթը¹: Մինչև 1999 թ. այն պահպանեց գործարար ձեռնարկության և հասարակական կազմակերպության երկակի կարգավիճակը²: 1999 թ. տարանջատվեց երկու բաժնի՝ խորհրդատվական և գիտական: Խորհրդատվական բաժնը վերանվանվել է Յունիրուլ Խորհրդատվական ֆիրմա (UCF), որն այդ պահից սկսած ամբողջովին առևտրայնացվել է և

¹ Zhu X., The Rise of Think Tanks in China. China Policy Series, 28. London; New York: Routledge, 2013, p. 78.

² Tibaldo G., Think tanks in the United States and in China. History and contemporary roles of Policy Research Institutes in two 'major powers', 2013, p. 148.

խորհրդատվական գործառույթներ է իրականացնում, մինչդեռ գիտական բաժինը, որը մնացել է որպես Յունիբրու տնտեսագիտության ինստիտուտ (Unirule Institute of Economics) մասնավոր, շահույթ չհետապնդող հետազոտական ինստիտուտ է և բուն ուղեղային կենտրոնի գործառույթներ է իրականացնում: Յունիբրու խորհրդատվական ֆիրմայի (UCF) բաժնետոմսերի 10%-ը պատկանում է Ինստիտուտին¹: Այդ միջոցներով վերջինս կարող է զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով: Երկու կազմակերպությունները ներկայումս պահպանում են «պարզած ձեռքի հետավորության»² շուկայական հարաբերությունները, որի դեպքում բոլոր գործարքներն ու ֆինանսական հարաբերությունները առանձնացվում են:

Յունիբրու (չինարեն՝ Շիանզե/Tianze) առաջացել է Շի Ցին (Shi Jing) բառից, իին չինարեն սուրբ գրվածքից, որն ասում է. «Քանի որ տիեզերքը ստեղծվել է Աստծո կողմից, աետք է կանոններ լինեն դրա համար»: Հետևապես, Յունիբրու մեկնարանվում է որպես «համընդհանուր կանոններ» (universal rules), որոնք կառավարում են բոլոր ոլորտները, ներառյալ տնտեսական և քաղաքական, ինչպես նաև սոցիալական և մշակութային ինստիտուտները:

Յունիբրու տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ է, կենտրոնացած է նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության և անցումային տնտեսության ուսումնասիրությունների վրա: Հետազոտությունների հիմնական ուղղություններն են անցումային տնտեսությունը Չինաստանում, նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը, ձեռնարկատիրական բարեփոխումները, ֆինանսական շուկան և ինստիտուտները, տրանսպորտը, էներգետիկան, գյուղատնտեսությունը և շրջակա միջավայրի պահպանությունը, կառավարական ինստիտուտների բարեփոխումները³:

Յունիբրու տնտեսագիտության ինստիտուտը աշխարհի առաջատար ՈՒԿ-ների շարքում 103-րդ է: Ըստ որում Ինստիտուտը 5 միլիոն դոլարից պակաս տարեկան բյուջե ունեցող առաջատար կենտրոնների շարքում զբաղեցնում է 11-րդ տեղը:

Յունիբրու տնտեսագիտության ինստիտուտը մասնավոր, շահույթ չհետապնդող, գիտահետազոտական և խորհրդատվական ընկերություն է, հիմնադրվել է հինգ տնտեսագետների կողմից՝ դոկտոր Հոնգ Շեն (Hong Sheng), պրոֆեսոր Յուշի Մաո (Yushi Mao), պրոֆեսոր Շուգուան Զժան (Shuguang

¹ Комиссина И. Н. Научные и аналитические центры Китая. Справочник, 2012, с. 41.

² «Պարզած ձեռքի հետավորության» սկզբունք (arm's length principle) - կողմերը ֆինանսապես կապված չեն միմյանց, օրինակ, նոյն ընկերության երկու մասնաճյուղերի միջև գործարքը կարելի է անվանել «պարզած ձեռքի հետավորության» սկզբունք միայն այն դեպքում, եթե հնարավոր է ապացուցել, որ գործարքն իրականացվել է ընթացիկ շուկայական գներով և ոչ մի արտոնյալ պայման նախատեսված չեղել:

³ URL: <http://www.eldis.org/go/home&id=4307&type=Organisation#.VinpD9IrKM8>

Zhang), դոկտոր Գան Ֆան (Gang Fan), Շոունին Տան (Shouning Tang), որոնց հովանավորը դարձավ «Պեկին ունիվերսալ կուլտուր կո» ՓԲԸ (Beijing Universal Culture Co): Այս կենտրոնը Յունիֆրուի հիմնադրման համար հատկացրեց 500 հազ. յուան, սակայն հետագայում ֆինանսական ճգնաժամի պատճառով միջոցների հատկացման հետ կապված դժվարություններ ունեցավ: Յունիֆրուի ստիպված եղավ ինքնուրույն միջոցներ հայթայթել: Սկզբնական շրջանում ֆինանսավորման հիմնական աղբյուրները մասնավոր ձեռնարկություններն էին, հետագայում կարևորագույն աղբյուր դարձան միջազգային կազմակերպությունները (Ասիական զարգացման բանկ, Ֆորդ հիմնադրամ և այլն): Յունիֆրուի ֆինանսները ձևավորվում են Չինաստանի և արտասահմանի հասարակական նվիրատվություններից և նախագծերի համար ժամանակավոր դրամաշնորհներից: Նախագծերն ընդգրկում են Յունիֆրուին հանձնարարված հետազոտության առաջարկները, թրեյնինգային ծրագրերը և այլ ծառայություններ: Վերջին տարիներին որոշ չափով ավելացել է պետության պատվիրած նախագծերը: Սա, իհարկե, չի ենթադրում ֆինանսական կախվածություն պետությունից: Ըստհանուր առմամբ, Յունիֆրուի միշտ ֆինանսական դժվարություններ է ունեցել:

Ներկայումս Յունիֆրուի աշխատակազմը 35 հոգուց է՝ 15 լրիվ դրույքով և կես դրույքով 20 աշխատակիցներ¹: Նրանցից շատերը մի քանի աշխատանք են կատարում համատեղելով վարչական և հետազոտական գործառությունները:

Կազմակերպության մարդկային ռեսուրսների ամենամեծ խումբը 158 հասուն հետազոտողներն են, որոնք սովորաբար Յունիֆրուից վարձատրություն չեն ստանում, սակայն ստանում են ինստիտուտի հրապարակումները, մասնակցում կազմակերպության գործունեությանը, հրապարակում իրենց հետազոտությունների արդյունքները: Նրանք վարձատրվում են, եթե ընդգրկվում են հետազոտություններում: Հատուկ հետազոտողների մոտ ¾-ը DRC-ից, CASS-ից և առաջատար համալսարաններից են, 12%-ը՝ պետական հատվածից, 6%-ը՝ արտասահմանյան համալսարաններից²:

Հաստատությունը սերտ համագործակցում է Չինաստանի առաջատար համալսարանների, ինչպես նաև այնպիսի պետական կառույցների հետ, ինչպիսին օրինակ, DRC-ն է: Ինստիտուտը վերջին տարիներին տարածնույթ համագործակցային հարաբերություններ է հաստատել միջազգային մասնակության կենտրոններ (CIPE), Ֆորդ հիմնադրամը, Ալթոն Քոնսի հիմնադրամը, ԱՄՆ–Չինաստան առևտրապարհունաբերական պալատը, Տնտեսագիտության միջազգային ինստիտուտը (IIIE), ինչպես նաև միջազգային հասարա-

¹ Zhu X., The Rise of Think Tanks in China. China Policy Series, 28. London; New York: Routledge, 2013, p. 79.

² Նոյն տեղում:

կական կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Ասիական զարգացման բանկը, Աֆրիկան զարգացման բանկը և այլն: Այն կապեր է պահպանում նաև մի շարք երկրների դեսպանությունների հետ:

Ցունիիրուլը հրապարակում է տարեկան հաշվետվություն կազմակերպության գործունեության մասին, պարբերականներ (China Economics, Chinese Social Sciences Review, Macroeconomic situation և այլն), հետազոտությունների հաշվետվություններ և գրքեր: Ինստիտուտի աշխատակիցները հողվածներ, մեկնարանություններ են հրապարակում ԶԼՄ-ներում:

Ցունիիրուլը տարեկան հրապարակում է ոչ պակաս, քան 7 ամսագիր: Հրապարակումներում առանձնանում են «Տնտեսագիտությունը Չինաստանում» (Economics in China) և Ցունիիրուլ աշխատանքային փաստաթղթերի շարքը (Unirule Working Paper series) տարեկան հրապարակումները:

Բացի հետազոտություններից՝ ինստիտուտը իրականացնում է թրեյնինգային ծրագրեր, կազմակերպում կանոնավոր սեմինարներ, տարեկան կոնֆերանսներ (տարեկան՝ մոտ 50 գիտաժողով): Հատկապես առանձնանում են երկու շաբաթը մեկ կազմակերպող Ակադեմիական դասախոսությունները, որոնց ժամանակ թույլատրվում է երույթ ունենալ միայն առավել ազդեցիկ գիտնականներին: Դասախոսությունները բաց են, թեմայով հետարրդված բոլոր անձինք կարող են մասնակցել: Մասնակիցները թիվը սովորաբար 10–30 է:

Ցունիիրուլը ունի նաև չինարեն կայք՝ China-Review, որը Ցունիիրուլի ակադեմիական փոխանակման հենքն է՝ նպաստելու մտավորականության և հանրության միջև շփմանը:

6.8 Ֆինանսական ուսումնասիրությունների Չոնյան ինստիտուտ

Chongyang Institute for Financial Studies (RDCY)



Ստեղծման տարեթիվ 2013

Տեսակը Համալսարանական հետազոտական կենտրոն

Տեղակայված է Պեկին

Կայք՝ <http://rdcy-sf.ruc.edu.cn/>

Ղեկավար՝ Չեն Յուլու /Chen Yulu,

Աշխատակազմ՝ 30

Չինաստանի Ռենման համալսարանի Ֆինանսական ուսումնասիրությունների Չոնյան ինստիտուտը (Chongyang Institute for Financial Studies,

Renmin University of China (RDCY)) նորագոյն վերլուծական կենտրոն է, հիմնադրվել է 2013 թ. հունվարի 19-ին Չինաստանի Ռենմին համալսարանի և «Չունյան ներդրումներ» ՓԲԸ-ի՝ Շանհայում տեղակայված մասնավոր ընկերության կողմից: «Չունյան ներդրումներ» ՓԲԸ-ի տնօրեն Ցյու Չոգենը (Qiu Guogen), որը Ռենմին համալսարանի շրջանավարտ է, ինստիտուտի հիմնադրման նպատակով համալսարանին 200 մլն յուան (1.6 մլն ԱՄՆ դոլար) նվիրատվություն է կատարել¹:

RDCY-ի առաքելությունն է ֆինանսների ոլորտում խորհրդատվություն տրամադրել կառավարությանը: Պրոֆեսոր Չեն Յուլոն, ով նաև Ռենմին համալսարանի նպատական է և Չինաստանի ժողովրդական բանկի արժութային հանձնաժողովի անդամը, RDCY-ի ղեկանն է:

RDCY-ն ունի գիտական խորհուրդ՝ 12 անդամից, ավելի քան 30 հոգուց բաղկացած մշտական աշխատակազմ, որոնցից 14-ը՝ ոչ ռեզիլիենտ ավագ գիտաշխատող (օրինակ, Կարլոս Մագարինոս (Carlos Magarinos)² ՓՄՁ գլոբալ այսակի նախագահը, Մարտին Լիս (Martin Lees)³ Հոոմի ակումբի նախակին գլխավոր քարտուղարը և այլն) և 20-ը՝ լրիվ դրույքով ավագ գիտաշխատող (օրինակ, Չինաստանի ազգային բանկի նախակին փոխնախագահ Չան Յալինը (Zhang Yaling) և այլն):

RDCY-ի գործունեության հիմնական սկզբունքն է՝ գործունեություն ծավալելով Ռենմին համալսարանում ֆինանսական միջոցներ ներգրավել ամբողջ աշխարհից, քաղաքական խորհրդատվություն տրամադրել պետությանը և ծառայել հանրությանը: Այս համատեքստում նշենք, որ թեակետ ինստիտուտի ֆինանսական միջոցների մասին տվյալներ չկան, սակայն 5 մլն ԱՄՆ դոլարից պակաս բյուջե ունեցող առաջատար կենտրոնների շարքում 16-րդն է:

RDCY-ն հետազոտություններ է իրականացնում մակրոտնտեսագիտության, կառավարման արդիականացման, համացանցային ֆինանսների, բանկային բարեփոխումների, միկրոֆինանսների ոլորտներում:

Համատեղ ու կանոնավոր հետազոտությունների իրականացումը RDCY-ի հիմնական գործառույթներն են: Արտասահմանյան գործընկերների հետ համատեղ հետազոտություններն իրականացվում են առավել հրատապ հիմնախնդիրների շուրջ՝ ինստիտուտի ավագ գիտաշխատողները և արտասահմանյան գործընկերները: Կանոնավոր հետազոտությունների արդյունքները հրապարակվում են պարբերականներում, հաշվետվություններում: Դրանցում արծարծված են առավել կարևոր նշանակության հիմնախնդիրները, ինչպիսին են ֆինանսական ներդրումները, մակրոտնտեսագիտությունն ու համացանցային ֆինանսները:

Ինստիտուտն ունի հետազոտական երեք հիմնական նախագիծ՝

¹ URL: <http://rdcy-sf.ruc.edu.cn/>

- Քսանի խումբ (G20),
- «Գոտի և ճանապարհ» (Belt and road)
- Էկո-ֆինանսներ (Eco finance):

RDCY-ն Ռենմին համալսարանի և մի քանի այլ Ռուկների հետ համատեղ կազմակերպում է G20-ի ուղեղային կենտրոնների տարեկան գագաթնաժողովը, որին մասնակցում են G20-ի երկրների, այդ թվում Չինաստանի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի բարձրաստիճան պաշտոնյաներ: Պատվիրակները քննարկում են համաշխարհային տնտեսության կարևորագույն հիմնախնդիրները¹: 2015 թ. անցկացվել է G20-ի ուղեղային կենտրոնների միջազգային երրորդ գագաթնաժողովը:

RDCY-ն իրականացնում է հետազոտական նախագիծ՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը: Նախագծի շրջանակներում կազմակերպում է ֆորումներ, կոնֆերանսներ՝ քննարկելու մետարսի ճանապարհի շինական նախաձեռնությունը: Ինչպես նշում է ինստիտուտի ավագ գիտաշխատող Ժենիս Կեմբրակը, ««Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը բաց է բոլորի համար, միաժամանակ մոտ 50 երկիր՝, որոնցով անցնում է հնագույն մետարսե ճանապարհը, պատրաստակամություն են հայտնել մասնակցելու այդ ծրագրին²»:

2014 թ. ինստիտուտը հիմնադրել է Էկո-ֆինանսական ուսումնասիրությունների կենտրոնը: Այս նախաձեռնությունը հնարավորություն կընձեռի ֆինանսական համակարգին միջոցներն ուղղելու էկոլոգիապես մարուր արդյունաբերական ոլորտներ, ձեռնարկություններ, միաժամանակ՝ ֆինանսական միջոցները դուրս բերել էներգատար հատվածներից³: Այս նախաձեռնության շրջանակներում նոյն թվականին հիմնադրվել են Միկրոֆինանսական ուսումնասիրությունների կենտրոնը և Ֆինանսական մշակույթի ուսումնասիրության կենտրոնը:

Հետազոտական 3 նախագծերի շրջանակներում հրապարակվել է 3 գիրք՝ անգլերեն և չինարեն տարրերակներով: Կենտրոնը հրապարակել է նաև այլ գրքեր, հետազոտությունների հաշվետվություններ:

RDCY-ն ամիսը 2-4 անգամ կանոնավոր գիտական սեմինարներ է անցկացնում: Դրանց շարքում առանձնանում է RDCY-ի Thought Salon-ը: Սեմինարներին մասնակցում են ֆինանսների և տնտեսագիտության ոլորտի

¹ URL: http://www.china.org.cn/china/2014-09/11/content_33481990.htm

² Հայաստանի Հանրապետություն և Ապարանակամություն է հայտնել մասնակցելու նախագծին: Առավել մարդամասն տե՛ս <http://armef.com/hy/news/ishkhanutyun/mek-goti-ev-mekchanaparh>

² Foreign experts on NPC & CPPCC One Belt One Road. URL: <http://www.mustaghata.com/News/102.html>

³ Boyuan Ch., RUC launches first eco-finance think tank in China, (26.11.2014). URL: http://china.org.cn/environment/2014-11/26/content_34154882.htm

առաջատար փորձագետները, հիմնական թիրախը տնտեսական հրատապ խնդիրներն ու ֆինանսական հարցերն են: Սեմինարների արդյունքները հրապարակվում են *RDCY* Ֆինանսական ուսումնասիրությունների հաշվետվությունում (Financial Studies Report), որը ներկայացվում է որոշումներ կայացնող համապատասխան բաժիններին ու ֆինանսական գրասենյակներին:

RDCY ֆորումները ևս անցկացվում են ամիսը 2–4 անգամ, բաց են հանրության համար, որի ընթացքում գեկուցումներով հանդես են զայս տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ: Ֆորումները նպաստում են Չինաստանի Ռուսական միջև ակադեմիական փոխանակությանը: Արդյունքները հրապարակվում են *RDCY*-ի Forum Authentic Records-ում:

Ինստիտուտը համագործակցում է մի շարք հեղինակավոր ԶԼՄ-ների հետ (Reuters, China daily և այլն), ինչպես նաև սոցիալական համագործակցություն է հաստատել Տորոնտոյի, Կոլումբիայի համալսարանի, Բրյուգել հետազոտական կենտրոնի և բազմաթիվ այլ կառույցների հետ:

RDCY հիմնադրման պահից կարճ ժամանակ է անցել, սակայն որպես չինական լուղարյան կենտրոն այն արդեն զգալի գիտական ձեռքբերումներ ունի: Սա առաջին չինական Ռուս է, որը կազմակերպում է G20 Ռուս-ների միջազգային գագաթնաժողովը, Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտու 12 երկրների Ռուս-ների ֆորումը, ինչպես նաև APEC-ի երկրների բարձրաստիճան պաշտոնյաների 3-րդ հանդիպումը (SOM3):

Ամփոփելով նշենք, որ Ինստիտուտը ձևավորվելով 2013 թ. վերջին, 2015-ին աշխարհի լավագույն 150 Ռուս-ների շարքում արդեն զբաղեցրել է 150-րդ տեղը: Ինստիտուտը ներքին, միջազգային տնտեսական քաղաքականության, սոցիալական քաղաքականության աշխարհի առաջատար Ռուս-ների շարքում է: «Երկու և ավելի Ռուս մասնակցության ինստիտուցիոնալ համագործակցության լավագույն օրինակ» կատեգորիայում զբաղեցրել է 46-րդ տեղը: Իսկ 2013–2014 թթ. «Ռուս-ների թողարկած լավագույն քաղաքական ուսումնասիրություն» կատեգորիայում Ինստիտուտի «Ազրարայնացումը Չինաստանում» հետազոտությունը 37-րդն է¹:

¹ McGann J., 2015 Global Go To Think Tank Index Report, p. 122, URL:
http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks

6.9

Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոն

China Center for International Economic Exchanges
(CCIEE)



Ստեղծման տարեթիվ	2009
Տեսակը	Կիսապետական
Տեղակայված է	Պեկին
Կայք՝	/english.cciee.org.cn/
Ղեկավար՝	Ցեն Պեյյան / Zeng Peian/
Աշխատակազմ	100

Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնը (CCIEE) հիմնադրվել է 2009 թ. մարտին՝ միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի և Չինաստանի տնտեսության բացման գործընթացի 30-ամյակի ֆոնին: 2008 թ. նոյեմբերին վարչապետ Ուեն Ջիաբաո (Wen Jiabao) հայտարարեց. «Ներկայիս անկայուն և բարդ տնտեսական իրավիճակում բավական դժվար է ճիշտ որոշում կայացնել՝ հիմնվելով միայն փոքր թվով մարդկանց խոհեմության վրա, ինտևապես մենք պետք է կարծիքներ լսենք բոլոր կողմերից և ամրապնդենք գիտական և ժողովրդավարական որոշումների կայացումը»¹: Վարչապետի խոսքը հստակորեն ուղղված էր CCIEE-ի ստեղծմանը: Դրա հետ մեկտեղ Չինաստանի տնտեսության բացման 30 տարիների ընթացքում փոխանակումներ հիմնականում տեղի են ունեցել Չինաստանի կառավարության մարմինների և ձեռնարկությունների միջև, այն դեպքում, եթե ՈւԿ-ների միջև կապերը հարաբերականորեն թույլ են եղել: Հետևապես, գաղափար ծնվեց Չինաստանում հիմնելու արևմտյան ՈւԿ-ների գործունեության ոճին համապատասխան գործող հետազոտական կենտրոն, որն ակտիվ դեր կիսադա օտարերկրյա ուղեղային կենտրոնների հետ փոխանակումներն ամրապնդելու գործում: Ցեն Պեյյանը նոր էր թոշակի անցել Պետական խորհրդի փոխվարչապետի պաշտոնից, և դա լավ հնարավորություն էր հրավիրելու 'նրան' դեկավարել հետազոտական կենտրոնը: 2009 թ. մարտի 20-ին Զարգացման և բարեփոխումների պետական հանձնաժողովի և Քաղաքացիական հարցերի նախարարության հաստատմամբ և վեցամյա նախապատրաստական աշխատանքներից հետո պաշտոնապես հիմնադրվեց CCIEE-ն:

Իր աշխատանքները սկսել է 2009 թ. գլոբալ ճգնաժամի ուսումնասիրությունից և երկրի տնտեսությանն օժանդակելու միջոցառումների առնչու-

¹ Zhu X. The Rise of Think Tanks in China. Routledge, 2013, p. 71.

թյամբ խորհրդատվության տրամադրումից: Կենտրոնի առաքելությունն է խթանել միջազգային տնտեսական հետազոտություններն ու փոխանակումները, մատուցել խորհրդատվական ծառայություններ:

CCIEE-ն աշխարհի առաջատար ՌԱԿ-ների 2015 թ. զեկույցի մի շարք կատեգորիաներում զբաղեցնում է առաջատար դիրքեր (Միջազգային զարգացման հարցերով առաջատար ՌԱԿ (100-րդ), Միջազգային տնտեսագիւղության ոլորտում առաջատար ՌԱԿ (61-րդ), Սոցիալական ցանցերի լավագույն օգտագործում (42) և Դիտարկման արժանի լավագույն ՌԱԿ (88)):

CCIEE-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- **տնտեսական հարցերի ուսումնասիրություն** (հետազոտությունների կենտրոնացում համաշխարհային տնտեսության, գլոբալ ֆինանսների, առևտրի, օտարերկրյա ներդրումների, առանցքային ներքին տնտեսական հարցերի և մակրոտնտեսական քաղաքականության վրա՝ կառավարությանը, հասարակությանն ու ձեռարկություններին ծառայություններ մատուցելու նպատակով),
 - **ներպետական և միջազգային մակարդակով փոխանակումների իրականացում** (չինական և օտարերկրյա ՌԱԿ-ների միջև փոխանակումների իրականացում կարևորագույն տնտեսական հարցեր ըննարկելու նպատակով, համաժողովների և սեմինարների կազմակերպում, կառավարության, հետազոտական կենտրոնների ու ձեռնարկությունների համագործակցության հարթակի ձևավորում),
 - **ներպետական և միջազգային մակարդակով տնտեսական համագործակցության խթանում** (համագործակցություն արտասահմանյան կառավարությունների, ձեռնարկությունների, հետազոտական կենտրոնների, միջազգային կազմակերպությունների հետ: Տեղեկատվությամբ ապահովելով և համատեղ ծրագրեր ներկայացնելով Չինաստանի և արտասահմանի կառավարություններին ու ձեռնարկություններին՝ կազմակերպությունը Չինաստանի և արտասահմանի միջև ծառայում է որպես տնտեսական համագործակցության ընդլայնման կամուրջ),
 - **խորհրդատվական ծառայությունների ապահովում** (կառավարության համար հետազոտությունների և վերլուծությունների իրականացում, ձեռնարկություններին խորհրդատվության տրամադրում):
- Կենտրոնի 89 աշխատակիցներից 65-ը հետազոտողներ են: Լրիվ դրույրով հետազոտողների 97%-ն ունի գիտության դոկտորի աստիճան:
- Փորձագետների խմբերը բաղկացած են 3 խումբ մարդկանցից՝
1. փորձագետներ և ձեռնարկատերեր, ինչպես նաև փորձառու նախկին պաշտոնյաներ,
 2. գիտնականներ և փորձագետներ, որոնք մեծ ճանաչում և ազդեցություն ունեն ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում,

3. Երիտասարդ և միջին տարիքի հետազոտողներ, որոնք ունեն զիտության դոկտորի աստիճան:

CCIEE-ի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի կառուցածքը¹

Բաժիններ

Ռազմավարական Էկտագոտությունների բաժին

Տագավարական համագույնաբարձրությունը՝ ՏՏՀ Տագավարական հետազոտությունների բաժին

Խորհրդատվական բաժին

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ բաժին

Տեղեկատվության բաժին

ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Հետրոիդական կրթության կենտրոն

Չինաստանի տնտեսական խորհրդատվական կորպորացիա

Առանձնակի ուշադրության է արժանի Չինաստանի տնտեսական խորհրդատվական կորպորացիան (China Economic Consulting Corporation - CECC), որը հիմնադրվել է 2011 թ.: Այս խորհրդատվական ծառայություններ մատուցող ձեռնարկություն է (enterprise of consulting services), ստեղծվել է *CCIEE*-ի Խորհրդատվության բաժնի հիման վրա: CECC-ը հոլիհնգային ընկերություն է, որի 100% բաժնետոմսերը պատկանում են *CCIEE*-ին: Կորպորացիայի գործունեությունն ընդգրկում է ուազմավարական խորհրդատվությունը, հասուլ նախագծերի վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, քաղաքականությանը, ներդրումներին, ֆինանսներին առնվոր խորհրդատվությունը, միջազգային համագործակցության վերաբերյալ խորհրդատվությունը և այլն: Կորպորացիայի հիմնական պատվիրատունները նախարարություններն են՝ ՉԺՀ Առևտիք նախարարություն, Մշակույթի նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Զարգացման և քարեկինումների ազգային հանձնաժողովը և այլն:

Հերազդությունների շրջանակն ու հիմնական արդյունքները

Պետական խորհրդին և Կենտրոնական կոմիտեին խորհրդատվության տրամադրումը մշտապես եղել է *CCIEE*-ի առաջնահերթ խնդիրներից մեկը: Կենտրոնը ԶԿԿ համար բազմաթիվ պիլոտային հետազոտություններ է իրականացրել:

Կենտրոնի խոր հետազոտությունների ուղղություններն են՝

1. ուազմավարական հարցերի հետազոտություններ,
 2. միջազգային տնտեսական հարցերի հետազոտություններ,

¹ <http://www.slideshare.net/DanniZheng/cciee-introduction>

3. ներքին տնտեսական հարցերի հետազոտություններ:

Առաջինը վերաբերում է հետանկարային, ուղմավարական և համայիր հարցերի ուսումնասիրություններին՝ ուղղված ազգային շահերի և անվտանգության պաշտպանությանը:

1. Ասիայի ենթակառուցվածքների ներդրումային բանկի հիմնադրման առաջարկ

2013 թ. հունվարին CCIEE-ն առաջ քաշեց Ասիայի ենթակառուցվածքների ներդրումային բանկի հիմնադրման առաջարկը, որի ուշադրության արժանացավ և հաստատվեց Զինաստանի նախագահի կողմից: 2015 թ. կենտրոնը այս առաջարկի խորը հետազոտություն է իրականացնում:

2. «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության զինավոր հետազոտական նախագիծը

CCIEE-ն հավաքագրել է իր լավագույն ռեսուրսները՝ իրականացնելով «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը (այն «Մետարսն ճանապարհի տնտեսական զոտի» և «21-րդ դարի ծովային մետարսն ճանապարհի հապակումն»): Այս նախաձեռնություններն առաջ է քաշել նախագահ Մի Մինփիկը 2013 թ. վերականգնելու առնորի հնագույն ուղիները):

3. «ԱՄՆ-Զինաստան տնտեսական հարաբերությունները հաջորդ տասնամյակում»

Կենտրոնը այս նախագիծն իրականացրել է 2011 թ., որը կառուցողական դեր ունեցավ չին-ամերիկյան հարաբերությունների զարգացման գործում:

Գծապարկեր 4

CCIEE-ի իրականացրած հիմնական հետազոտական նախագծերը

Հետազոտություններն իրականացվում են Զինաստանի զարգացման կարիքներին համապատասխան: Ստորև ներկայացված են CCIEE-ի գործունեության հիմնական արդյունքները:

